



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ. Այնպիսի մը վերջացող տարւոյն վրայ..... Բ. ԳԵՉԵԱՆ
 ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ. Երկնից մէջ (ՔԱՄԻՂ ՖԼԱՄԱՐԻՈՆ) Թարգմ.....
 ՆՈՐԱՎԷՊ. Անժէլիք (ԱՆԷՔՍԱՆՏՐ ՏԻԻՄԱ ՈՐԴԻ) Թարգմ.....
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Տաղ առակաց ի վերայ Ս. Երուսաղէմի..... Ս. Ս.
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաբէն, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԱՎԷՆՇ ՏԸ ՄՕՆԹԵԲԷՆ) Թարգմ..... Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան..... Կէս Օսման • ոսկի
 » » վեցամսեայ..... Բառ » »
 Մէկ թերթին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 ֆրանք
 » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան..... Բառ արծ. 15
 վեցամսեայ 7 1/2



Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
 Ղալաթիա, Նորատունկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 28 Դեկտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈՒՍՆԱԿԱԳՐՈՅ

ամիս	Լոնտրայի վրայ (պանքայի)	110 1/4
3 »	» (վճարին)	109 7/8
3 »	Բարիլի » (պանքայի)	22 90
3 »	» (վճարին)	22 97 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՐՂԹՈՅ

Օսմանեան Բոսնիայի

Երեկ երեկոյ զոցուեցաւ	» 8 28
Պորային զոցուեցաւ վերջը	» 8 27 1/2
Բերայի մէջ	» —
Առաւօտուն բացուեցաւ	» 8 26
Բարձրագոյն գին	» 8 26 1/2
Նուազագոյն	» 8 26
Կէս օրին	» 8 26
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.)	70 25
Երեկ Երեկուն զոցուեցաւ	70 22 1/2
Բերայի մէջ	—
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	70 20
Կէս օրին	70 20
Հէվալէսիզ	40
Իւնիֆիէ գոնայիտէ	—
» Իւնիֆիէ	—
Փոխառութիւն 1863	» 71
» 1865	» 56 50
» 1869	» 48 50
» 1873	» 43
Պոն տիւ թրէզոր	» 20 50
Բուսէլի երկաթուղի	» 44 50
Օպիկասիոն տը Բրիտիթ	» —
Բաժնեկիւղի Լաւրիոմի	» 68

ԲԱՅՆԵՏՈՒՄ

Սօսիթէ Ժէնէրալ	» 3 24
Բրէտի Ժէնէրալ (Գ. Կ.)	» 7
Պանք տը Գոնս	» 5 15
Սօս. Շանփէ վալէօր	» 3 20
Թրամոնէյ	» 290

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	» 100
20 Ֆրանքոնց	» 87 25
Անգլիական ոսկի	» 110 20
Բօլ լաբէրիալ	» 90 10
Քրիմից	» 54 10
Ռուսի թղթադրամ	» 8 76
» արծաթ	» 89 10
Ֆիօրին	» 9 2
Իւէճ. արծ. (տարբ.)	» 108 1
Վեցնոց	» 102 30
Հինգնոց	» 102 30
Մէթալիք	» 99
Պղինձ	» 780
Թղթադրամ	» 3200

ԵՐԻՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 8 Գոնվար Ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսօլիտէ զոցուեցաւ	99 3/4
Օսմ. բացուեցաւ	15 11 1/16
» զոցուեցաւ	8 1/2
Օսմ. փոխառութիւն 1865	44 1/8
» 1869	9 5/8
» 1871	68
» 1872	19
» 1873	8 1/2
Փոխառութիւն 1877	80 5/4
Պանք Օթոման	43 3/4
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	63 5/8
» առանձն. (Բրիտիթ)	87 5/8
Տայրա Սանիէ	62 5/8
Տօմանիալ (փոխառ. Բօլիալ)	87 3/4
Հոնգարական պարտաթուղթ 1877	—
Փոխառութիւն Բարիլի վրայ	—

Վիեննա, 8 Գոնվար Ժամ 10 վ. 30 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	124
Օսմանեան երկաթուղի	21 20
Բարիզ, 7 Գոնվար Ժամ 3 վայր. 15 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	109 62 1/2
» 3 0/0 բաց	79 60
Օսմանեան քոնսօլիտէ բացուեցաւ	15 80
» զոցու. (գ. Կ.)	8 75 (°)
» 1865	55
» 1869	48
» 1873	43
Օսմանեան երկաթուղի	44 12 1/2
» Բէթիլ բաժնեկիւղի	514 25
Պանք Օթոման	598 75
Գրէտի Լիօնէ	527 50
» Ֆոնսիէ (գ. Կ.)	1315
Բաժնետոմս Լիօնի (գոնք. կոր.)	1242 50
Սուէզի ջրանցք	1820
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	97 5/4
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97 57 1/2
Եգիպտական միացեալ գոց	323 75
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	59 1/4
Բրիտիթ Թիւրք	387 50
5 0/0 Հելլենական (գ. Կ.)	344 37 1/2
Չէք Լոնտրայի վրայ	25 32

ԲԱՐԻԶ ԲԵՅՆ ՊՈՒՐՍ

Գոնվար 8 Ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	109 57 1/2
Օսմանեան »	15 72 1/2
Եգիպտական միացեալ	326 37 1/2

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ԴՐ ՏԱՐԻ

1884 ԴԵԿՏԵՄԲԵՐ 29

ԹԻԻ 3750

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՎԵՐՋԱՑՈՂ ՏԱՐԻՈՅՆ ՎՐԱՅ

Մասի Շաբաթաթերթի ներկայ թիւն 1884 տարւոյ վերջին թիւն է : Տարի մ'եւս անցուցինք ազգային ծանր խնդիրներով, որոց ո՛չ մին գոհացուցիչ վիճակի մէջ կը թողունք : Էջմիածնի Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ այսօր նոյնչափ անստուգութեան մէջ ենք որչափ անցեալ տարի այս ժամանակ, և մինչ 1883 Նոր Տարին կը թեւակոխենք՝ չունինք գէթ այն յոյսեր որով կ'որորուէինք 1883 տարւոյ դեկտ. ին : Ռուս կառավարութիւնը տարւոյս մէջ բացորոշապէս պնդեց Պալատենիոյ անթերի գործադրման վրայ, և այս նկատմամբ ո՛ր և է պատրանք կրել աններելի է այլ եւս : Ռուս կառավարութեան այս խիստ ընթացից հանդէպ, գո՛նէ Մայր Աթոռոյ վրայ արժանաւոր Գահակալ մը տեսնելու բարեբախտութիւնը չունինք : Տարւոյս մէջ հոգեւոյս Տ. Ներսէս Պատրիարք Կաթողիկոս ընտրեցաւ՝ իւր առողջութեան և հայրապետական պաշտօնավարութեան մասին ջերմ յոյսերով : Բայց նախ այս բարձր պաշտօնէ հրաժարեցաւ, Պալատենիոյ խնդիրն յարուցանելով, և ապա, գրէթէ երիտասարդ հասակի մէջ, աշխարհէն իսկ հրաժարեցաւ : Եթէ ռուս կառավարութիւնը բացառիկ ճնշում մ'ի գործ չդնէ՝ գՄակար Սրբազան Կաթողիկոս ընտրել տալու համար, Խրիմեան Սրբազան և Մելքիսեդեկ Սրբազան հաւասար հաւանականութիւն ունին Կաթողիկոս ընտրուելու : Հայ ազգն այս երկու Սրբազաններէ մին Կաթողիկոս տեսնելով գո՛հ կը լինի անշուշտ և

կ'երեւի թէ երկուքին ալ ընտրութիւնը ժողովրդական է : Բայց ընտրութիւնն իսկ ի՞նչ եղանակաւ պիտի կատարի : Ռուսիոյ Հայք ճշդիւ պիտի հետեւին Պալատենիոյ, և այս ուղղութեամբ ընտրական գործողութիւնք արդէն սկսեր են ի Կաւկասիա, և Սինոդը Շրջաբերականներ ղրկած է նաեւ Կ. Պոլիս : Բայց Թուրքիոյ Հայք ի՞նչ ընթացք պիտի բռնեն : Կաթողիկոսական խնդրոյ վրայ կարգ մը յօդուածներով Աթէնք ցուցուց նոր ընտրութեան մը պէտքը, զոր արդէն հրամայած է ռուս կառավարութիւնն, և Թուրքիոյ Հայոց նկատմամբ՝ 1866ի ընտրական եղանակին հետեւելու անկարելիութիւնը, ըստ որում այդ եղանակ նոյնչափ կը կապտէ Ռուսիոյ Հայոց իրաւունքն, որչափ մեր Ազգ. ժողովոյ մէջ իսկ փոքրամասնութեան իրաւունքը : Բայց 1884ի բարեփոխեալ դրութիւնն, որչափ ալ արդար, պիտի կրնայ գործադրուիլ Էջմիածնի մէջ իսկ Ընտրողական ժողովն որ Եջմիածին՝ ի նկատ պիտի առնո՞ւ երեք ընտրելի Եպիսկոպոսաց վրայ մեր Ազգ. ժողովոյ քուէներն, և ո՞վ պիտի լինի ներկայացուցիչ այս քուէից :—Ասոնք կարեւոր հարցումներ են, որոց ստոյգ պատասխան մը չենք կրնար տալ, զի ստոյգ որոշում մը տրուած չէ տակաւին, և մեր Ազգ. ժողով, Տեղապահական-Պատրիարքական խնդրոյ անվերջանալի ձեւակերպութեանց լրանալուն սպասելով, պարսաւելի անտարբերութիւն մը կը ցուցնէ Կաթողիկոսական այս կենսական խնդրոյ նկատմամբ, զոր կ'երեւի թէ դարձեալ մեծաւաստներորդ ժամուն հապճեպով բանի մը նմանցնել պիտի ջանայ, և բան մ'իսկ չպիտի կրնայ ընել : Զպիտի կրնայ, այս ընթացքով, իւր ձայնն յարգել տալ ո՛չ թէ ռուս

կառավարութեան պէս օտար իշխանութեան մը, այլ նոյն իսկ իւր անմիջական իշխանութեան ներքեւ գտնուող գաւառային Վիճակներուն, որք այս տարւոյ դարնան, ոտնակոխ ընելով Սահմանադրութիւնն և Թուրքիոյ Հայոց Երեսօխոսանական ժողովոյ ամենէն հիմնական իրաւունքները, Կաթողիկոսական ընտրութեան համար ուղղակի յարաբերութեան մոտան Էջմիածնի Սինոդին հետ, հաղորդելով իրենց քուէներ ու փափաքներ, և թէպէտ ի նկատ չառնելով այս ապօրէն քուէներ՝ Սինոդը մեր այն Վիճակներէ աւելի յարգեց Թուրքիոյ Հայոց կեդրոնական իշխանութեան իրաւունքները, բայց իւր այս հոգածութեան համար յանդիմանութիւն լսեց ուս իսկաւարութենէն, որ կ'ուզէ քաջակերել Թուրքիոյ Վիճակաց անջատման ձգտումներն, և զանոնք Կ. Պոլսոյ իրաւասութենէն հանելով՝ ուղղակի հաղորդակցութեան մէջ դնել Սինոդին հետ: Երեսօխոսանական ժողովոյ համար, որ աւանդապահն է Սահմանադրութեան, անշուշտ յոյժ ծանր խնդիր մ'է այս. բայց ութ ամիսներէ հետէ Ալդ. ժողովոյ մէջ գրէթէ խօսք անգամ չեղաւ յայտ մասին, և շատ կը վախնանք որ այսուհետեւ ժողովը ժամանակ քնաւ չպիտի ունենայ զրադելու այսպիսի երկրորդական խնդրովք, երբ անդին անձնական խնդիրները, «միջադէպներն ու «թիւրիմացութիւններն իրեն կը սպասեն իւր թանկագին ժամերը կողոպտելու համար ըստ վաղեմի պատկառելի սովորութեան:

*
* *

Էջմիածնի Մայր-Աթոռէն զատ, Նոր Տարին թափուր կը գտնէ նաեւ Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը: Տարւոյս մէջ Ալդը դառն կորուստ մ'ըրաւ, Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վաստանամբ: Երեւելի դէմք մը, մեծանուն Աղգապետ մը պակեցաւ Հայոց մէջէն: Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսին վախճանումէն ի վեր ո'չմէկ Աղգապետի մահն այսչափ կտրիժ պատճառած էր Ալդին: Նման Աշտարակեցւոյն, Վարժապետեան Ներսէսն ալ ունեցաւ աղգաչէն մեծ խորհուրդներ, և բարձրացուց վարկն ու պատիւն այն Աթոռի զոր դրաւեց տան երկար տարիներ, երկրին պատմութեան յոյժ տաղնապալից մէկ ժամանա-

կին մէջ: Ներսէս Վարժապետեան պաշտօն վարեց բացառիկ ժամանակներու մէջ, և բացառիկ հանգամանք մ'ունեցաւ իւր պաշտօնավարութիւն: Ուստի, սովորական ժամանակներու Պատրիարքաց պաշտօնավարութիւնն ի'նչ տեսութեամբ որ կը նկատենք ու կը քննենք, նոյն տեսութեամբ կարելի չէ նկատել ու քննել Ներսէսի պաշտօնավարութիւնը: Մաղթենք որ արժանաւոր յաջորդ մը բազմի Ներսէսի Աթոռին վրայ: Թէ ո'վ պիտի լինի այս յաջորդ, կարելի չէ այս օրունէն դուշակել: Լրագրերը շաբաթէ ի շաբաթ Ընտրելի կը փոխեն, ո'ր մին օրինական պատճառներով, այլ ոմն ո'չ նշուալ հասկնալի այլ ո'չ այնչափ հրապարակաւ խոստովանելի պատճառներով, և զարմանալի այն է որ յաջորդ շաբթուն մէջ ջերմապէս կը յանձնարարուին Ընտրելիներ, որոց անունն իսկ տալ չէր ուղուեր նախորդ շաբթուն մէջ. . . : Եւ յետոյ, այդ տեսակ թերթեր ուղղութիւն ու անկեղծութիւն կը քարոզեն իրենց պաշտօնակցաց: Այսպէս են Կ. Պոլսոյ դործերն: Ընտրելիներու այս համարցման մէջ, Ալդին միակ ապաւէտն է 110 ի չափ ընտրեալ Երեսօխոսաններու ողջմտութիւնն և աղգապիւրութիւնն, որք Պատրիարքական ընտրութեան առթիւ անշուշտ պիտի ջանան խղճի մոտք կատարել իրենց պարտականութիւն: Ընտրուելու ամենէն աւելի հաւանականութիւն ունենալ կը թուի և արդէն Եկեղեցական Համապետմար ժողովոյ մէջ ամենաբարձր քուէն ստացած է Կարնոյ նախորդ Առաջնորդ և այժմ Երուսաղեմի Պատրիարքական Փոխանորդ Տ. Յարութիւն Սըրբաղան Վեհապետեան, որ երկար ժամանակ գաւառային կարեւոր պաշտօններ վարած լինելով, մասնաւոր արժանիք մ'ունենալ կը թուի այս պաշտաման, ուր վերացական հմտութեանց չափ և դուցէ աւելի կարեւոր են անձնական փորձառութիւնը ի մասին աղգային կառավարութեան: Բայց կոնսակիցներ ունին նաեւ Կրօնական ժողովոյ Ատենապետ Խորէն Նար Պէյ Սրբազան և Պրուսայի Առաջնորդն: Այլ ո'վ որ ընտրուի, անհրաժեշտ է որ լրջօրէն ձեռք առնու աղգային ներքին բարենորոգմանց երկար ժամանակէ ի վեր անտես եղած կենսական դործն, և աղգային փիճակի ներած չափով հետամուտ լինի տակաւ բարեօրէն:

և բարձրացնելու մեր կրթական դրութիւն , կղերին վիճակը , վանօրէից վիճակը , Պատրիարքարանի և ազգային զանազան հաստատութեանց վիճակը , միանգամայն ամեն ջանք ու ճարտարութիւն ի գործ դնելով վասն բարեփոխման Ազգին յարաբերական կացութեան Բ. Դրան հետ , և այսու նպատակը մը տալով Կայսերական Կառավարութեան բարեյօժարութենէն կախուած կարգ մը առաջնորդական , կրթական , գաւառային և ազգային-եկեղեցական առանձնաշնորհմանց առկա խնդիրներուն :

* *

Յրուսաղէմի պարտուց խնդիրն եւս չը կարգադրեցաւ վերջացող տարւոյն մէջ : 2,000 ռսկիէ աւելի տոկոս մ'էս բարդեցաւ զիպեալ պարտուց վրայ . բայց տակաւին Նրեսիո-խանական ժողովը չորոշեց թէ ինչ եղանակաւ պիտի աշխատուի վճարել : Չինուորական տրոց վրայ յաւելման մը սկզբունքն ընդունուած կը թուի . բայց տակաւին վիճաբանութեան և լուսաբանութեան կարօտ չատ կէտեր կան խնդրոյն մէջ , և վարմանալի է այն անտարբերութիւն որով ամիսէ ամիս կը յետաձգուի այսպիսի ստիպողական խնդրոյ մը նկատառութիւնը : Ճշմարիտն ըսելով , մեր ազգային մարմինը չատ խակ են փոքր ի չատէ կնճուտ խնդրոց մէջէն ելնելու մասին , թէեւ բաւական անտարբեր են թողնելու համար որ բնապէս պարզ խնդիրներ կնճուտին հետգհետէ : Միւս կողմէ , Նոր Տարին չատ հիւանդ վիճակի մէջ կը գտնէ Յրուսաղէմի Ս. Պատրիարքն , և այսու մտահոգութիւն մ'աւելի կ'ունենանք : Իւր ծանր հիւանդութիւն և պարտուց խնդրոյն երեսի վրայ մնալը տարիներէ հետէ Կ. Պոլսոյ մէջ փակած են զՆ. Սրբազնութիւն :

* *

Արիւկիոյ Կաթողիկոսութեան հետ Պատրիարքարանի յարաբերութեանց խնդիրն եւս , հակառակ այնչափ խոստմանց , չկարգադրեցաւ տարւոյս մէջ : Տ. Մկրտիչ Կաթողիկոսի քով կը մնայ դեռ այն Պէրաղ որով ըստ ամենայնի անկախ է Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն . իսկ բարեփոխեալ Պէրաղն որոյ վրայօք չատ խօսուեցաւ , չգիտցուիր ո՛ւր կը մնայ : Միւս կողմէ , Արիւկիոյ ազգային , բարոյական և կրթական վիճակին մէջ չու-

նինք որ և է բարեփոխման ծանուցանելու : Կաթողիկոսն յոյժ գործնական մարդ է , և այսպիսի վերացեալ խնդրովք չգրադիր բնաւ :

* *

Առկա կը մնայ նաեւ ազգային-եկեղեցական առանձնաշնորհմանց խնդիրը : Բ. Դուռը տարւոյս մէջ յոյժ գոհացուցիչ կերպիւ կարգադրեց Յունաց առանձնաշնորհմանց խնդիրն , իրաց նախկին վիճակին անփոփոխ պահպանումն հրամայելով : Այսպիսի կարգադրութիւն մը կարելի ընելու համար , Յունաց եկեղեցական և քաղաքական վարչութիւնը և յոյն հասարակութիւնը չատ արժանաւոր ընթացք մը բռնեցին , եռանդեամբ , խմստութեամբ և չընհայեցութեամբ հետամուտ լինելով ստացեալ իրաւանց անվթար պահպանման : Իսկ մեր Յիւղեցական Համագումար ժողովոյ յայտ մասին որոշումներն ու բաղձանքներն ամիսփոյ թագրիրին , զոր ճիշդ տարի մ'առաջ առ Բ. Դուռը մատուցած էր հանգուցեալ Պատրիարքը , Կայսերական Կառավարութիւնը չուղեց պատասխանել : Պահ մը , դիտողութիւն ընելով թէ Յիւղեցական Համագումար ժողովն իբրեւ կալմակերպեալ մարմին մը չի ճանչնար , Բ. Դուռն յիշեալ թագրիրն ետ զրկելու տրամադրութիւն եւս ցուցուց . բայց ապահովիչ պատասխաններ ստանալով , խնդիրն առկա թողուլ բարեհաճեցաւ : Ուստի , քանի որ խնդիրն իսկ առկա է , գործնականի մէջ կը տեսնուին զանազան արարք , որք յիշուած առանձնաշնորհումները փոփոխել կը միտին որոշապէս :

Բ. Դուռը կարճածոց և տասանորդաց վրայ յաւելում մ'ըրաւ՝ նախնական և երկրորդական թուրք վարժարաններն աւելցնելու և ընդարձակելու համար , յորս քրիստոնեայ աշակերտներ եւս ընդունելու պատրաստութիւն ցուցուց : Այս կրթական տուրքեր սկսած են հաւաքուիլ : Պատրիարքարանը , դիտել տալով թէ , ըստ Սահմանադրութեան , հայ ազգին յանձնեալ է իւր զաւակաց կրթութեան գործը , կը խնդրէ որ հաւաքեալ նոր տուրքէն մաս մը շնորհուի Հայոց ազգային վարչութեան՝ ազգային վարժարանաց պահպանման և դարգացման դործածուելու համար : Այս խնդիր կարգադրուած չէ՝ տակաւին , թէեւ անցեալ մայիս

ամսոյ մէջ էր որ Բ. Դուռն առ Պատրիարքարան ծանոց իւր որոշում երկար պաշտօնագրով մը : Դիտողութիւն ալ եղած է, կարծենք ոչ-պաշտօնապէս, մեր վարժարանաց մէջ թուրք լեզուի ուսուցման անխնամ վիճակին վրայ, որով կառավարական դպրոցք առաւել կը համապատասխանեն կառավարութեան բաղձանաց : Բայց մեր Ուսումնական Խորհուրդ կաշխատի բարեօրել և բարձրացնել մեր վարժարանաց մէջ պետական լեզուին ուսուցման աստիճանն, որուն կարեւորութիւնը քաջ կը ճանչէ, և եթէ Կայսերական կառավարութիւնը բարեհաճի շնորհել խնդրուած նստատն, անշուշտ առաւել կ'արդիւնաւորին յայտմ մասին Ուսումնական Խորհրդոյ բարենպաստակ ջանքերն : Այլ ինչ որ լինի, տարակոյս չկայ թէ կրթական տուրքը կը յարուցանէ յոյժ կարեւոր խնդիր մը, որոյ յաջող կարգադրման համար նոր Պատրիարքը շատ իմաստուն և ճարտար ընթացք մը պարտի բռնել : Դիտելի է, միւս կողմէ, կրթութեան տրուած նոր զարկն զմեզ շրջապատող բոլոր ժողովրդոց մէջ : Իւր ծանրագրաւ վիճակին և Պետական գանձուն անձկութեան մէջ, կառավարութիւնն ո՛չ ջանք ո՛չ դրամ կը խնայէ թուրք վարժարանաց զարգացման համար, և վերջին ամսոց միջոցին միայն Հայաստանի Քրդաց մէջ աւելի քան 40 նախակրթարանք բացուած են : Մտածել ուզողներուն համար շատ կարեւոր նիւթեր կան մտածման արժանի :

*
* *

Կրթական խնդիրները ապաքէն առատութեամբ ունեցանք տարւոյս մէջ, թէեւ շօշափելի արդիւնքներ դեռ չունինք ծանուցանելու : Անցեալ տարի այս ժամանակներ ցաւ կը յայտնէինք Կեդրոնական վարժարանի խնդրոյն երեսի վրայ մնալուն համար : Այսօր, Կեդրոնական վարժարանի ձեռնարկը լրջօրէն ձեռք առնուելէն զատ, «Ներսէս Վարժապետեան» Ուսումնարանի մը հաստատման գործն եւս ունինք առ ձեռքն : Շատ մը անվստահութիւններ, որք ազգային առողջ վիճակի մը յայտարարներ են բնաւ, Կեդրոնական վարժարանի խնդիրը կ'նձուռտեցին : Յայտնի է թէ այս վարժարանի բացման համար 2,000 ոսկիէ աւելի գումար մը պարտին տալ քանի մը կարող

ազգայինք : Բայց իրողութիւն մ'է որ, դրամատէր ազգայինք իրենց դրամը չեն վստահիր Վարչութեան, և Վարչութիւնն ալ իւր իրաւունքները չի վստահիր դրամատէր ազգայնոց : Սորա կը փափաքին որ և է ձեւով հսկողութիւն ի գործ դնել ի նպաստ Ազգին իրենց տուած գումարներուն գործածման եղանակին վրայ, մինչ Վարչութիւնը կը հրաւիրէ զանոնք դրամ տալ և բանի չը խառնուիլ : Նրկու կողման անվերջանալի բանակցութիւններն ու վիճաբանութիւնները տարրալուծելով, ի վերջոյ այդ եզրակացութեան կը համեմատեն : Բայց վերջին օրերս յոյս կայ թէ, փոխադարձ զիջումներու շնորհիւ, համաձայնութիւն մը կ'ընդունուի վրայ է, որով անյապաղ պիտի բացուի Կեդրոնական վարժարանն, և մագլթենք որ այսպէս լցուի Ազգին մէկ յոյժ իրական պէտքը :

Հոգեւոյս Պատրիարքին անուան գիշերօթիկ և ցորեկեայ կանոնաւոր կրթարան մը նուիրելու գաղափարը շատ գովելի է : Նոյն հարուստներ որոց հանգուցեալ Պատրիարքն իւր սիրտը բացած էր՝ Ազգը կրթական բարձր հաստատութեամբ մը օժտելու փափաքն յայտնելով, ձեռնարկած են՝ Կեդրոնականին բացման օժանդակելէ զատ՝ նաեւ առանձին Ընկերութեամբ անկախ Կրթարան մը բանալ Ն. Սրբաշնութեան անուան նուիրեալ : Այս ձեռնարկութեան յաջողումը միւսին յաջողութեան չափ պարզ չերեւիր : Բայց գոհութեամբ կը տեսնենք թէ կարգ մը մեծատուններ ինքնասիրութեան խնդիր մ'ըրած են «Ներսէս Վարժապետեան» Ուսումնարանի բացումն ու յաջողումն, և ի նկատ առնելով հոգեւոյս Պատրիարքին Ազգին մէջ և Ազգէն դուրս վայելած համակրանքն ու ժողովրդականութիւնն, հաւանական է որ ընկերական հանգանակութիւնն այնպիսի գոհացուցիչ արդիւնքներ տայ, որք Ազգը կանոնաւոր կրթարանով մ'եւս օժտելու բաւեն : Մի և նոյն հայ ազգը չէ՞ միթէ որ Տըփղիսի մէջ ալ կանդնած է Ներսէսեան բաղմարդիւն վարժարան մը, Ազգին սիրելի ուրիշ Հայրապետի մը անուան նուիրեալ :

Իսկ ընդհանուր կրթական վիճակի մէջ չունինք ո՛ր և է բարեօրում ծանուցանելու : Մեր ազգային թաղային վարժարանք կը շարունակեն իրենց ծանուցեալ անգոհացու-

ցիչ կացութեան մէջ, և մասնաւոր վարժարանք, որք շատ սահմանափակ ծառայութիւն մը միայն կրնան մատուցանել ազգային կրթութեան, նախորդ տարիներու հետ բաղդատմամբ արտասովոր բարգաւաճում մը չեն ստացած: Ուսումնական խորհուրդը կը քննէ ընդհանուր վարժարանաց վիճակին բարւոքման ծրագիր մը: Բայց յայտնի է թէ ծրագրերը չեն բնաւ որ ցարդ պակասած են Ազգիկն, կամ պիտի պակսին այսուհետեւ:

* *

Ազգային ընկերութիւնը զգալի յառաջդիմութիւն մը չըբին տարւոյս մէջ: Միացեալ ընկերութիւնը և Խիզանի ընկերութիւնը կը շարունակեն յոյժ օգտակար գործ մը Հայաստանի և Գրգաստանի խեղճ և տգէտ ազգայնոց մէջ. բայց այս տարի բացառիկ նպաստներ չստացան, թէեւ ամեն արժանիք և իրաւունք ունին: Միացեալ ընկերութեանց Վարչութեան մէջ վերջերս փոփոխութիւն մ'եղաւ, և նոր Վարչութիւնը խզի մտօք կ'աշխատի: Կատարելի գործն յոյժ մեծ է, և կ'արժէ որ նոր տարւոյն մէջ Ազգն աւելի եւս օգնէ այս ձեռնարկութեանց: Գոհութեամբ կը հաստատենք նաեւ Ազգանուէր Հայուհեաց և Գալոցսէր Տիկնանց ընկերութիւններուն համակրելի և արգիւնաւոր գործունէութեան անընդհատ յարատեւութիւնն: Ուրիշ ընկերութեանց վիճակին մէջ եւս, եթէ բացարձակ յետագիմութիւն մը չկայ, բայց յառաջդիմութիւն ալ չկայ:

* *

Այն դաւաճներու մէջ ուր կը գործեն վերոյիշեալ ընկերութիւնք՝ ազգային տեսակէտով բարւոքում մը չունինք նշանակելու: Ուրեք ուրեք արդարեւ գոհացուցիչ արթնութիւն մը կը տեսնուի՝ կրթութեւ և յառաջդիմելու համար. բայց այս շարժում գրեթէ այսինքն Կեդրոնէն և ներսէն այսինքն տեղային ժողովրդէն շատ քաջալեր չի գտներ տակաւին: Վիճակներ գորս անհովիւ թողուցինք անցեալ տարի, այս տարի եւս նոյն կացութեան մէջ են գրեթէ: Կարին 1884 տարւոյ վերջն աւելի գոհացուցիչ վիճակի մէջ է բան սկիզբը: Մուշ կը շարունակէ նոյն խեղճ վիճակի մէջ: Վանայ մէջ, Խրիմեան Սրբազանի Առաջնորդու-

թիւնն ակնկալուած արդիւնքը չտուաւ, և փոփոխում մ'եղաւ: Այլ և այլ նկատմամբ մասնաւոր հոգածութեան առարկայ եղած լինելով, հայաբնակ դաւաճաց այս կէտ կը կարօտի յատուկ ուշադրութեան ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ: Սերաստիա կայուն վիճակ մ'ունի: Երիզա փորձով ցոյց կուտայ թէ գիտէ ամեն ինչ Առաջնորդէն չակնկալել: Ծովեղերեայ քաղաքներն ըստ սովորութեան աւելի յառաջագոյն են, մինչ Զէյդուն ծանրագոյն հարուած մը կը կրէ աղետալից հրդեհի մը երեսէն:

* *

Նշանաւոր երկեր հայ գրականութիւնը չարտադրեց տարւոյս մէջ: Հ. Գարեգին Սըրուանձտեանցի, Պ. Յակոբ Ալլահփէրտեանի և Պ. Միրախորեանի աշխատութիւնք Բարձր Հայոց և Կիլիկիոյ տեղագրութեան վրայ, օգտակար յաւելումներ եղան մեր գրականութեան վրայ. բայց հայ հանճարի բացառիկ արտայայտութիւն մը չտեսանք: Երկրին տնտեսական, գրաքննական և կրթական պայմանք ձեռնառ չեն գրականութեան զարգացման: Գրելու կարող ազգայիններ ուրիշ գործով կը պարասլին, չքաջալերուելով անոնց օրինակէն որք գրելու անձնուիրութիւնն ունին: Հոյակապ գործ մ'է՝ սակայն Տ. Նորայրի Փռանսահայ Բառգիրքն, որոյ հրատարակութիւնն այս տարի վերջացաւ, և Հ. Սերովբէ Տէրվիշեանի Հնագիտական Դասագիրքն՝ բանասիրական ընտիր գիրքը: — Հայ լրագրութեան մէջ տարւոյն մեծ դէպքն է Արեւելի երեսունն, որ արդէն առաջնակարգ թերթն եղած է Ազգին, ցարդ հրատարակեալ հայ լրագրաց ամենէն կատարելագործեալը գոլով նիւթապէս ու բարոյապէս միանգամայն, և Մասիի կերպարանափոխումն, որ այժմ կը հրատարակուի շաբաթաթերթ, մեր պարբերական մամուլ մէջ պակաս մը լրացնելով: Ուրիշ ներկատմամբ գրեթէ միեւնոյն վիճակի մէջ կը մնայ լրագրութիւնը: Ռուսիոյ Հայոց մէջ գրականութիւնն ու լրագրութիւնն այս տարի որ և է յառաջդիմութիւն չընէլէ զատ, որոշապէս յետագէ՞մ շարժում մ'ըբին, կառավարութեան գրաքննական խստութեանց աւելնալով, և Մշակի ու Արշալուի դադարմամբ, եւ:

* *

Այս վիճակ Ռուսահայոց՝ կը յիշեցնէ մեզ նաեւ սա տխուր իրողութիւն թէ, Ռուսիոյ

Հայոց ազգային-քաղաքական վիճակն, որ երբեմն բաւական փայլուն էր, չատ նսեմացաւ վերջերս, յորմէ հետէ Տոնտուրոֆ Գորսաքոֆ իշխանն եղաւ կուսակալ Կաւկասիոյ։ Անդհանուր յետադիմութիւն մը կայ ուսումական Կայսրութեան մէջ։ Անժըխ տեղի իրողութիւն մ'է այս։ Այլեքսանդր Գ Կայսեր իշխանութիւնն իւր հօր իշխանութենէն չատ ետ կը մնայ երկրին քաղաքական զարգացման և վարչային ազատութեան տեսութեամբ։ Այս յետադիմութիւն զգալի է նաեւ ի Կաւկասիոյ։ Մեծ խնդիրն որ այժմ սրտատանջութիւն կը պատճառէ մեր եղբարց որ յայնկոյս Մասեաց՝ Հայոց դըպրոցներու հրատապ խնդիրն է, զորս ուսուկառավարութիւնն իւր ուղղակի իշխանութեան ներքեւ առնուլ կը սահմանէ։ Ռուս կառավարութիւնը կ'ուզէ սեղմել իւր հայ հպատակաց կրթութիւնը։ Այլ սեղմէ անոնց անտեսական զարգացումն ալ, հայ հողագործներուն հող զլանալով քաղաքական հեռանկատ նպատակով։ Այլ պատրաստուի առաւել ուղղակի միջամտել ազգային-եկեղեցական մեծ ընտրութեան մը, Կաթողիկոսի ընտրութեան։ Այլեքսանդր, մի առ մի ետ կ'առնու խօսելու և գրելու դոյզն ազատութիւնը զոր սուրած էր վերջին պատերազմէն յետոյ։ 1884 տարին ըստ ամենայնի անհաճոյ կերպիւ կը փակի նաեւ ի Կաւկասիոյ։ Բայց ուսահպատակ Հայք վատեւելու չեն։ Դորսդոյներու և Տոնտուրոֆներու բռնակալ իշխանութիւնը չի կրնար մշտնջենական լինել։

* *

Մեր Կեդրոնական Վարչութիւն տարւոյս մէջ որ և է ներքին կամ արտաքինական կարեւոր խնդիր չլուծեց, և հիմնական ձեռնարկներ չըրաւ։ Կրօնական և Քաղաքական ժողովները դո՛ւ կը մնան առօրեայ ընթացիկ մանր մուկ խնդիրներ անօրինելով, թէ և երբեմն չափազանց աղմուկ կը հանուի այնպիսի աշխատանայ համար զորս հեռուէն դիտող մը՝ Ազգին ընդհանուր վիճակին վերաբերմամբ կարեւոր չի կրնար համարել բնաւ։ Բայց Կրօնական և Քաղական ժողովներն ամեն շաբթու կը գումարին և կ'աշխատին, և այս իսկ բաւական է այնպիսի ժողովրդի մը համար որ աւելի չի կրնար պահանջել, և թերեւս իրաւունք ալ չունի պահանջելու։

Հայ ժողովուրդը տարուէ տարի կը դադրի հոգածութիւն ունենալէ իւր ազգային դործոց վիճակին վրայ։ Անտարբերութիւնն ամ ըստ ամէ կ'աւելնայ։ Ութ տարիներէ հետէ, իբրեւ յետին գրող մը լրագրութեան մէջ, Ազգին վիճակը մօտէն դիտելու դատաւարտուած, ցաւօք սրտի կը հաստատենք այս աճեցուն անտարբերութիւն։ Եթէ այսպէս երթայ, ներկայ վիճակն ուղղակի պատճառ պիտի լինի որ Ազգը չատ իրաւունքներ կորուսանէ և իւր դործեր հիմակուրէն չատ աւելի դէ՛լ կ'առավարուին։

* *

1884 տարին կը փակենք ուրեմն դժգոհ և յուստես։ Բայց յուսահատիլ պէտք չէ բնաւ։ Նոր տարւոյն մէջ Ազգը նոր Կաթողիկոս մը և նոր Պատրիարք մը պիտի ընտրէ։ Եթէ ժողովրդային տրամադրութիւններն ալ նպաստեն, այս դէպքեր ազգային-բարոյական վիճակի տակաւ բարեփոխման մ'ըսկալանքութիւն կրնան լինել։ Նոր Տարին շնորհաւորելով մեր ինթերցողաց, կը մագթենք քիչ մ'աւելի անկեղծութիւն մեր ազգային վարիչ մարմնոց, հայ ժողովրդին ալ քիչ մ'աւելի հոգածութիւն ազգային իրաց ու դարձուածոց մասին, և ամենուն մէկէն՝ քիչ մ'աւելի ղեկավարութեան զգացում։ Ազգին բարւոյն համար։ Աչքերնիս չորս բանանք մեր շուրջը կատարուող շարժումներուն վրայ, և անոնցմէ խրախուսուինք։ Դիտենք թէ տիրող իշխանութիւնը ամեն ուրեք ո՛րչափ կարեւորութիւն կ'ընծայեն մեր վայելած առաւանձնաշնորհմանց, և անոնց յարգը ճանչենք։ Դիտենք զմեզ շրջապատող ժողովրդոց յառաջդիմական ձգտումներն, և աշխատինք ետ չմնալ անոնցմէ։ Եւ ասոր համար, ժամանակիս աճեցուն պահանջմանց համապատասխան վիճակի մէջ դնենք մեր դըպրոցները, մեր կղերն և մեր ազգային զանազան հաստատութիւններն, ընդհովանեաւ մեր Օգոստոսիաո ինքնակալին և իւր հայրախնամ Կառավարութեան։

Բ. ԲԵՉԵԱՆ

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ

Պ. Գամիլ Ֆլամարիոն ժողովրդական հեղինակը հետեւեալ ընտիր յօդուածն հրատարակած է Ֆիկարօ թերթին մէջ: Հրատ մտորակին մէջ ենթադրական ճանբորդութիւն մ'է գրական գեղեցիկ ոճով պատմուած, որոյ ընթերցումը մեծ հաճոյք կը պատճառէ:

ԵՐԿՆԻՑ ՄԵՋ

Կը յիշեմ թէ ամրան տօթադին օր մը, երեկոյեան մօտ, կը նիրհէի սուրակի մ'եղերքն, ամայի բլրի մը կուշտը: Վայրկենական թմբուկութենէ մը յետոյ երբ արթնցայ, անհնարինս զարմացայ զի չէի տեսներ այլ եւս ո՛չ երկրանկարն, ո՛չ մերձակայ ծառերըն, ո՛չ վտակն որ կը հոսէր բլրակին ստորոտն, ո՛չ մարմնադէն ալեծածան որ կ'երթար կ'անհետէր հեռուն հորիզոնին մէջ: Արեւը մայրը կը մտնէր, և մեր տեսած սուրբական արեւէն աւելի փոքր էր: Կը թըրթըռար օդը քաղցրադաշնակ միմունջներով գերալսարհային, և թռչնոյ մեծութեամբ միջատներ կը թռչտէին ծառէ ի ծառ, ծառեր անտերեւ՝ որք ծածկուած էին վիթխարի ծաղկներով կարմրափայլ: Ելայ, իբրեւ զսպանակէ մը մղուելով յափշտակութենէս, և ուժգին ոստմամբ մը յոտին կանգնեցայ յանկարծակի, զգալով յիս աննման շարժում մը թեթեւակի: Հապիւ քանի մը քայլ առած էի, ինձ այնպէս թուեցաւ թէ մարմնոյս ծանրութեան կէսէն աւելին յօդս ցնդած էր նիրհած միջոցիս: Այս ներքին զգայութիւնն յափշտակեց զիս խորագոյն՝ քան բնութեան այլակերպութիւնն որ կը պարզուէր աչացս յանդիման:

Հապիւ թէ կը հաւատայի աչացս ու ըզգայարանացս:

Բաց աստի, աչքերս յայտնապէս չէին առաջուան պէս, առաջուան պէս չէր այլ եւս որ կը լսէի և այդ առաջին վայրկեաններէն իսկ դիտեցի որ կադմուածքս օժտուած էր բազում նորանոր զգայարանօք, որք բոլորովին տարբեր էին մեր երկրային զգայարանքէն, — և օժտուած մասնաւորապէս մաքնիսական զգայարանով մը, որով էակ մ'ուրիշ էակի մը հետ կրնայ հաղորդակցիլ,

առանց հարկ մնալու լողութեամբ բանից բացատրել մտածութիւնքն. այդ զգայարան կը յիշեցնէ շարժումն այն մազնիսաւոր սըլաքին, որ Փարիզու դիտարանին մէկ մանանին խորէն կը դողայ ու կը սարսուի՝ երբ ի Շուէտ հիւսիսայգ մը բոցավառի, և երբ ելեկտրական պայթիւն մը փայլակէ ի ծոցն Արեգական:

Արեւը նուաղած էր հեռաւոր լճի մը մէջ, և վերջալուսոյ վարդագոյն ճաճանչներն ի խորս երկնից կը ափուռէին իբրեւ յետին երազ լուսատեսիլ: Կրկին լուսնակը լուսավառեցան իրարմէ տարբեր բարձրութեամբ, որոց առաջինն մահկաձեւ կը բարձրանայր այն լճին վերեւ՝ ոյր ծոցին մէջ աներեւոյթ եղած էր արեւն. երկրորդ լուսնակն, իւր առաջին քառորդ մասամբ, առաւել եւս բարձրացած էր յարեւելակողմն երկնից: Այդ լուսնակը յոյժ փոքր էին և յոյժ հեռի նմանէլ երկրային գիշերաց անբաւ լապտերին: Իրենց առոյգ այլ անգոր չողն իբրեւ յակամայս կ'արձակէին: Փոխն ի փոխ անոնց կը յառէի ակնապիշ: Գուցէ ամենէն զարմանալին, այդ անսովոր տեսարանին բովանդակութեան մէջ, այն էր թէ արեւմտեան լուսնակն, որ իբր եռապատիկ առաւել մեծ էր քան զիւր ընկերն արեւելեան, միանգամայն հինգ պատիկ նուազ տարածութեամբ քան զիւր լուսինն երկրային, կ'ընթանար երկնից մէջ այնպիսի ընթացքով մը, զոր աչօք դիտել դիւրին էր յոյժ, և թուէր թէ արշաւասոյր կը սլանար աջակողմէն ձախակողմն՝ իւր երկնային բեռ միանալու յարեւելակողմն:

Նոյնպէս, վերջալուսոյ յետին նուաղուն ճաճանչներուն մէջ, կը տեսնուէր երրորդ լուսնակ մը, կամ լաւ եւս էր ըսել՝ չողուն աստղիկ մը: Սա առաւել փոքր էր քան զփոքրագոյնն երկուց արբանեկաց և իւր սկաւառակն աննշմարելի կ'ընծայէր. այլ կը փայլէր լուսապայծառ: Այդ աստղիկ կը սաւառնէր երկնից մէջ երեկոյին՝ որպէս Աստղիկ մեր երկնից մէջ՝ երբ իւր լուսափայլի պայծառութեան օրերն « Արուսեակըն » իբրեւ թագուհի կ'իշխէ՝ անուշ երազներով լի գարնային զուարթ երեկոյթներու վրայ:

Արդէն պայծառագոյն աստղերն երկնից մէջ կը վառէին. կը տեսնուէր Արկտորն ու-

կեճածանչ, վեկան ա՛յնքան սպիտակ ու ա՛յնքան յստակ, եօթն աստղերն հիւսիսային, և բազում համաստեղութիւնք Ջողիակոսին: Նրեկոյեան աստղն, այն նոր Վէսբերն, կը ճաճանչէր նոյն ժամուռն Զկանց համաստեղութեան մէջ: Քանի մը վայրկեանի տեւողութեամբ, երկնից մէջ անոր ունեցած դիրքը զննելէ, ըստ օրինակի համաստեղութեանց նաեւ իմ գտնուած տեղս ալ քննելէ, երկու արբանեակները խուզարկելէ և անձիս ծանրութեան թեթեւալուռն խելամուտելէ յետոյ, չվարանցայ համոզուիլ թէ Հրատ մոլորակին վերայ կը գտնուէի և թէ այդ չքնաղ աստղն երեկոյեան ... ԵՐԿԻՐՆ էր:

* * *

Աչկունքս յառած մնացին անոր վերայ, համակեալ մեղմադձիկ զգացմամբ մը սիրտին որ կը ճնշէ մեր սրտին թեւերն, երբ մեր մտածութիւնը կը թռչի դէս ի սիրեցեալ այն էակն՝ յորմէ անմատոյց անջրպետ մը կը հեռացնէ զեզ. ընդ երկար կը յառէի ընդ բնագաւառն այն՝ ուր ա՛յնքան այլազան զգացմունք իրերաց կը խառնուին ու կը բախին կենաց կռիւներու մէջ: Եւ կը խոկայի. —

«Ո՛րչափ ցաւալի է որ այդ փոքրիկ վայրը բնակող մարդկային անհամար էակներ չը գիտնան թէ ո՛ւր են: Աքանջելի է այդ մանրանկար երկիրն, արեգակամբ լուսաւորուած, իւրեան հետ ունենալով իւր լուսինն՝ առաւել մանրագիտական քան զինքն և որ իբրեւ կէտ մը կը տեսնուի իւրեան մօտ: Յանտեսանելին վարեալ ձգողական օրինօք երկնային, հիւլէ ծփակո՞ծ՝ երկնից անհուն ներդաշնակութեան մէջ, իւր ուրուշեալ տեղը կը գտնուի և ի բարձունս անդ կառկաթի իրբեւ կղզեակ մի հրեշտակային: Բայց իւր բնակիչը անդէտ են այսօր: Անօրինակ մարդկութիւն: Նա յոյժ ընդարձակ գտած է երկիրը, խմբերու բաժնուած է և իւր ժամանակը կ'անցընէ պատերազմաց մէջ: Այդ երկնային կղզեկին մէջ ո՛րչափ բնակիչ՝ այնչափ զինուոր կայ. սոքա համայն զինուած են միմեանց դէմ, մինչդեռ ա՛յնքան բնական էր որ խաղաղութեամբ ապրէին, և փառք կը համարին իրենց մերթ ընդ մերթ դաւառաց անուանելը և գրօշակաց գոյնը փոփոխել: Այդ իսկ է սիրելի զբաղումս աղ-

գաց և սկզբնական դատարարութիւնը քաղաքացւոց: Բաց աստի, իրենց էութիւնը կը գործածեն նիւթին պաշտաման: Չեն գնահատեր մոռային արժէքը, կը մնան անտարբեր արարչագործութեան խղիւղոց ամենահրաշալի և կ'ապրին աննպատակ: Ափսո՛ս: Եթէ Փարիզու բնիկ մը բնաւ լաւ չըլլար այդ քաղաքին ու Գաղղիոյ անուններուն արտաբերումն, առաւել օտարական ոք չալտի ըլլար նա՝ քան զմարդիկ իրենց բնագաւառին մէջ: Ա՛հ, թէ սոքա կարէին ա՛յս տեղէն տեսնել Նրկիրն, ո՛րքան հաճութեամբ պիտի վերադառնային արդեօք հոն և ո՛րքան արդեօք պիտի յեղաշրջուէին իրենց բոլոր գաղափարներն ընդհանուր ու մասնաւոր: Յայնժամ պիտի ճանչէին գոնէ իրենց բնակած երկիրն. սկզբնաւորութիւն մը պիտի լինէր այդ. յաջորդաբար պիտի ուսումնասիրէին իրենց չուրջն եղած գերագոյն իրականութիւններն, փոխանակ անգործ կեանք մը վարելու անհորիզոն շամանդաղի մը ներքեւ, և յետոյ պիտի ապրէին ճշմարիտ կենօք, որ է մոսաւորական կեանքըն »:

* * *

—Ո՛րքան ալ պատիւ կ'ընծայէ նմա: Սառուիւ կարծես թէ բարեկամներ թողուցած է նա այդ թիարանին մէջ:

Նա խօսած էի բնաւին: Սակայն խիստ որոշակի լսեցի այդ խօսքն որ գողցես կը պատասխանէր իմներքին բարբառոյս Հրատ մոլորակէն երկու բնիկներ զիս կը դիտէին և միտքս ըմբռնած էին, այն մագնիսական ըմբռնման վեցերորդ զգայարանին զօրութեամբ՝ զորմէ խօսեցոյ վերեւ:

Սակաւ ինչ զարմացայ և, կը խոստովանիմ իսկ, խորապէս վիրաւորեցայ նոյն կըշտամբանքէն: Այլ սակայն խորհեցայ թէ, կը սիրեմ Նրկիրն, իմ հայրենիքս է այն և ես ունիմ հայրենասիրութիւն:

Իմ երկու մերձաւորք այս անգամ խընդացին ի միասին երկոքեան:

—Այո՛, ըսաւ անոնցմէ մին անակնկալ ազնուութեամբ մը, դու ունիս հայրենասիրութիւն: Յայտնի կը տեսնուի թէ Նրկէն կուգաս դու:

Եւ աւելի հաստիւստորն յարեց. —

Մէկդ ի՛ թող ըս այդ հայրենասիրեցներդ,

որք երբէք չպիտի ըլլան ո՛չ առաւել մտացի, ո՛չ ալ նուազ կոյր քան այսօր : Արդէն ութսուն հազար տարի եղաւ որ հոն են : Եւ դու իսկ կը խոստովանիս թէ նորա տակաւին չեն կարող մտածել . . . Իրօք զարմանալի ոմն ես դու որ ընդ Երկիր կը յառիս ա՛յդքան գորովալիր : Ի՞նչ միամտութիւն : —

Ազնի՛ւ ընթերցող, ճանրող վերայ հանդիպած չե՞ս դու երբեմն ա՛յն կարգի մարդոց, որք ազնիւ հպարտութեամբ մը համակեալ են եւ որք զինքեանս անկեղծօրէն և անկասկածօրէն բարձրագոյն կը կարծեն միւս բոլոր մարդոցմէ : Երբ այդ մեծամիտ անձինք իրենցմէ բարձրագունին դէմ ելնեն, վայրկենական հակակրօնութիւն մը կ'ըլլա՞նք ընդ այն, չեն հանդուրժեր առ այն, և որպէս մեծանունն լը Վէրիէ երբէք Ակադեմիայէն ներս չէր մտներ առանց իւր շքերթանց ստորին կողմը վեր վերցնելու և առանց իւր ձախ ուսը թեթեւ չարժամաք մը բարձրացնելու, նոյնպէս և այդ անձինք յինքեանս արհամարհանք մը կ'զգան խորին համայն մարդկութեան համար : Արդ, կրնաս գուշակել թէ վերողբեալ ասացուածէն յետոյ (որոյ ցամաք բացատրութիւնը լսեցիր այժմ) ես ինքզինքս յոյժ բարձրագոյն կ'ըլլա՞յի երկրային մարդոցմէ, որովհետեւ կը խանդաղատէի անոնց վրայ և կը մաղթէի անոնց համար բարւոք օրեր : Այլ երբ Հըրատի այդ երկու բնիկք իմ անձիս վերայ խանդաղատիլ թուեցան, և կարծեցի նշմարել անոնց վերայ անհաճոյ բարձրութիւն մը քան զիս առաւել, արիւնս չըջան մ'ըրաւ միայն, և ինքզինքս զսպելով հանդերձ, բացի բերանս իրենց ըսելու :

— Այլ սակայն, տես՛րք, Երկրի բնիկներն այնքան անմիտ չեն որքան կը թուի թէ կը կարծէք դուք :

Դժբախտաբար, խօսքս սկսելու իսկ չը թողուցին ինձ, որովհետեւ ըսելիքս գուշակած էին այն պահուն՝ յորում խօսքս կը կազմակերպուէր մոքիս մէջ՝ ուղեղիս թըրթըմամբ :

— Թո՛ղ որ ըսեմ քեզ մէկ խօսքով, ըսաւ անոնցմէ դեռահասակն, թէ բացարձակապէս թերակատար է ձեր մօլորակն, ա՛յն նշանաւոր դէպքին հետեւութեամբ՝ որոյ թուականը կ'սկսի տասն միլիոն տարիներ յառաջ : Երկրի ծննդագործութեան նախ-

նական ժամանակամիջոցին թուականն էր այն : Յայնժամ կային արդէն տունկեր, և տունկեր հիանալի, և նախկին անասունք կը տեսնուէին ի խորս ծովուց որպէս և ի վերայ ծովափանց, կենդանիք թուլատարր՝ անդլուխ, խուլ, համր ու անսեռ : Գիտես արդէն թէ ծուերը շնչառութեամբ միայն կը սնանին կատարելապէս և թէ ձեր ամենէն հաստաբուն կաղնիներն, ձեր ամենէն վիթխարի եղեւիններն երբէք բան մը կերած չեն . և այս արգելք մը չէ եղած անոնց ուռճանալուն . կը սնանին շնչառութեամբ միայն : Բախտը, ճակատագիրը կամեցաւ որ առաջին անգամ թուլատարր անասնոյ մը մարմինն անցնի՝ համատարած միջոցէն աւելի ստուար կաթիլ մը ջուրէն : Թերեւս անասունը օխորժահամ գտաւ զայն : Այս եղաւ սկիզբն առաջին մարսողական խողովակին, որ այնքան ձախող աղղեցութիւն մ'ի դորձ պիտի դնէր ընդհանուր անասնոց վերայ, և յետոյ նոյն իսկ մարդոց վերայ : Ուտող անասունն եղաւ առաջին ոճրագործն :

Հոս ուտել չկայ, երբէք բան կերուած չէ, երբէք չպիտի ուտուի : Արարչագործութիւնն իւր ծաւալն ստացած է աստիճանաբար, խալալասիրաբար, մեղմաբար, ինչպէս որ սկսած էր : Մարմնային գործարանք կը սնանին, կամ ուրիշ կերպ ըսենք, իրենց տարրական մասունքը կը նորոգեն պարզ շնչառութեամբ մը, հանգոյն ձեր երկրաբոյս ծառոց, որոց մէն մի տերեւն է մի փոքր ստամոքս : Ձեր սիրելի բնագաւառին մէջ դուք օր մը չէք կրնար ապրիլ առանց խողովակի : Ձեր մէջ կեանքի օրէնքն եղած է մահուան օրէնքն : Հոս ոչ ուրուք մտքէն անցած է զարնել նոյն իսկ թռչուն մը : Գուք ամենքդ ալ, առաւել կամ նուազ, սպանդագործներ էք : Ձեր բաղուկք արիւնշաղախ են : Պարէններով խճողեալ են ձեր ստամոքսներն : Ի՞նչպէս կարելի է որ այդպիսի կոշտ կազմուածքով կարենայք ունենալ առողջ, ջինջ, բարձրագոյն, — և պիտի ըսեմ՝ մինչեւ իսկ (ներեցէք համարձակութեանս) մաքուր գաղափարներ : Որպիսի՞ հոգիներ կրնան բնակիլ այդպիսի մարմնոց մէջ : Ուստի խորհէ՛ վայրկեան մը և մի՛ խաբեր դու քեզ կոյր բանդագուշանօք որ կարի մտացածին են այդպիսի աշխարհի մը համար :

— Ինչպէ՛ս, գոչեցի զինքն ընդմիջելով,

չե՞ս ընդունիր որ կարելի ըլլայ ինձ ունենալ մաքուր դադախարներ : Անտոնոց տե՞ղ կը դնես զմարդիկ : Հոմերոս , Պլատոն , Փիդիաս , Սենեկա , Վիրգիլիոս , Տանթէ , Գոլոմպոս , Պաքոն , Գալիլէոս , Բասսալ , Լէոնարո , Ռաֆայէլ , Մոցարդ , Պեդովէն , սոքա բնաւ երբէք չունեցա՞ն բարձր ներշնչում : Մեր մարմինները կոշտ ու զաւրի կը գըտնես . եթէ աչացդ առջեւէն անցնէին Հեղինէն , Փրինէն , Ասբասիան , Սալուստիոն , Կղէպպարան , Լուքրէցիա Պորճիան , Ագնէս Սորէն , Հերակլիացի Անահիտն , Վալուացի Մարգարիտան , Բորգէզան , Տալիտն , Ռէկամիէրն , Գեորգուհին և իրենց սքանչելագեղ մրցակիցներն , գուցէ յայնժամ այաղդ պիտի խորհէիր : Ա՛հ , ազնիւ Հրատցի , ներէ որ ես ալ փոխարէն ցաւ յայտնեմ թէ դու հեռուէն միայն գիտես Երկիրն :

— Կը սխալիս այդ խօսքով , յիտուն տարի բնակեցայ ես այդ աշխարհի մէջ : Այդչափին ինձ բաւական է , և վստահ եղիր որ ոչ եւս հոն պիտի վերադառնամ : Ամեն բան թեւրակատար է հոն , նոյն իսկ . . . այն որ քեզ ամենէն չքնաղագեղ կը թուի : Կը խորհի՞ս թէ երկնից բոլոր հողերուն վերայ ծաղկունք միեւնոյն եղանակաւ ծնունդ կուտան պըտղոց : Անհանդ ուրժելի չէ՞ր եթէ այդպէս ըլլար : Իսկ եթէ ինձ հարցնես , գարնանաբոյս ծաղկներն ու վարդի կոկոնները կը սիւրեմ ես :

— Այլ սակայն , յարեցի , ինչ որ ալ ըսուի , երկրի վերայ երեւելի հանճարներ գըտնուած են , և իրօք սքանչելի արարածներ : Ես այնպէս կը յուսամ թէ Փիդիքական ու բարդական գեղեցկութիւնն եւս քան զեւս պիտի կատարեալագործուի , որպէս ցարդ , և թէ մտքերն հետզհետէ պիտի լուսաւորուին : Մարդիկ իրենց բոլոր ժամանակն ու տեղով չեն անցըներ : Իրենց նիւթական վաստակոց զբաղելով հանդերձ , նոքա պիտի յաջողին դարձեալ ամեն օր քանի մը ժամ նուիրել իրենց մտային զարգացման : Այն ատեն անուշտ ոչ եւս պիտի չարունակեն հնարել փոքրիկ աստուածներ իրենց պատկերին նման , և գուցէ պիտի քննեն նաեւ իրենց տղայական սահմաններն , որպէս զի ներդաշնակութիւնն ու եղբայրութիւնը թաւալուրեն :

— Ո՛չ , բարեկամ , զի եթէ ուղէին այդ-

պէս ընել , այսօրէն կ'սկսէին ընել : Ուստի և կ'զգուշանան անկէ գլխովին : Երկրաբանակ մարդն է փոքր կենդանի մ'որ մէկ կողմէ չ'զգար խորհելու հարկը , չունենալով հողւոյ անկախութիւնն իսկ , և միւս կողմէ , կը սիրէ մարտնչիլ և արձակ համարձակ իրաւունքը զօրութեան վերայ կը զետեղէ : Այդ իսկ է իւր բարեյօժարութիւնն և այդ իսկ է իւր բնութիւնը : Պիտի կարենա՞ն երբէք դեղձ արտադրել փշալից մաշառէն :

Մտածէ՛ ուրեմն որ ամենէն սքանչելի գեղեցկութիւնը երկրային՝ որոց կ'ակնարկելիր այժմ , ոչ այլ ինչ են բայց եթէ այլանդակ ձիւաղներ՝ Հրատի օդաթռիչ մեր կանանց մօտ , ոյք մեր դարուններու օդը , մեր ծաղկներու անուշ բուրումները վայելելով կ'ապրին , և այնքան են հեշտալի՛ իրենց թեւերուն թրթուումովը միայն , և երբէք բան մը չճաշակող բերանոյ մը երազային համբուրիւը միայն , զի եթէ Տանթէի Պէադրիսն ունենար բնութիւն մը նմանօրինակ , Ֆիօրէնցայի անմահ դաւակն անկարող կ'ըլլար գրելու երկու երգերն իսկ իւր երկնային կատակերգութեան . նա յայնժամ «Արքայութեան» կ'սկսէր գրել և երբէք անկէ չէր իջներ ի վայր : Մտածէ՛ թէ մեր երկրտասարդը այնչափ համոթիւն ունին ընդածին , որչափ Պիթագորաս , Արքիմէտէս , Եւկլիտէս , Կէպլէր , Նեւտոն , Լապլաս և Տարուին ունէին՝ յետ այնքան ծանրատաղտուկ ուսումնասիրութեանց . մեր երկրտասան զգայարանը զմեզ ուղղակի հաղորդակցութեան մէջ կը դնեն տիեզերաց հետ . մենք այստեղէն կ'իմանամք , հարիւր միլիոն միլիոն հեռուէն , Լուսնի մագալանցքին ձգողութիւնը . Երեւալի բակերն ակն յանդիման կը տեսնեմք . կը նախատեսեմք գիսաւորի մը գալուստն , և մեր մարմինն է համակեալ այն արեգակնային ելեկտրականութեամբ , որ չարժման մէջ կը դնէ գրնութիւնն համայն : Հոս երբէք տեղի ունեցած չեն ո՛չ հիմնադիրը իշխանութեանց , ո՛չ միջազգային պառակտումը , ո՛չ պատերազմը . այլ մարդիկ ի բնէ խաղաղասէր և զերծ ո՛ր և է նիւթական պէտքէ , առաջին օրէն հոս տալրած են անկախ մարմնէ ու մտքէ , յարատեւ գործունէութեամբ մ'իմացական , անդադար բարձրանալով ի ծանօթութիւն ճըլ-

մարտին : Բայց եկո՛ւր դու մինչեւ հոս որ տեսնես :

*
* *

Լերան դադաթը քանի մը քայլ յառաջ գացի ինձ խօսակից եղողներուն հետ , և երբ միւս զառիթափին տեսարանը հասայ , տեսայ խռռներամ լոյսեր երկներվեան որ կը թռչտէին օդոց մէջ : Սոքա բնիկներն էին , որք գիշերն՝ երբ ուղէին՝ լուսաւորներ կը դառնային : Օղաւայ կառքեր , կառուցեալ ծաղկօք լուսափթիթ , գուսաններ ու մուսայներ բարձած կը տանէին . կառքերէն մին եկաւ անցնիլ մեր մօտէն և մենք տեղաւորուեցանք ի գոգն ամպի մը խնկաւէտ : Զգացած հմայք էին բոլորովին տարբեր ա՛յն ամեն հմայքէն , զորս Երկրի վերայ ըզգացած էի , և Հրատ մոլորակին վերայ՝ այդ առաջին գիշերն անցաւ իրբեւ երազաթուիչ երազ մը , քանզի արշալոյսն երբ կը ծագէր , ես դեռ օղախաղաց կառքին մէջն էի , կը խօսակցէի իմ խօսակիցներուս հետ , իրենց բարեկամներուն հետ և իրենց անճառելի ամոլներուն հետ : Որպիսի՞ տեսիլ համատարած ի ծագել արեգական : Ծագլունք , պըտուղք , բուրմունք , դիւթական պալատունք կը բարձրանային ի վերայ կղզեաց նարնջափթիթ , պաղպաջուն բիւրեղանման կը ծաւալէին աղբերակունք , և սիրազուարթ ամօք օղաթեւ՝ պտուտկելով կ'իջնէին սյգ չնայխարհիկ ամուսնին : Հոն , բոլոր նիւթական աշխատութիւնք կը կատարուին գործիներով և կը վարին քանի մը կատարելագործեալ կենդանական ցեղերով , որոց մը տաւորական աստիճանն է գրեթէ համադաս՝ երկրաբնակ մարդկան մտաւորական աստիճանին : Հոն , բնիկք կ'ապրին մտօք միայն և մտքի համար միայն , իրենց ջղային դիրքն այնքա՛ն զարգացան վիճակի մը հասած է , զի այդ էական անձնիւրն , ամենափափուկ ու ամենակիրովի միանգամայն , ելեկտրական գործւոյ մէջ նման , և իրենց ամենէն զգայական ազդեցութիւնք , առաւելապէս իրենց հոգւով քան թէ մարմնով զգացուած , հարիւրապատիկ առաւել զգալի են քան ա՛յն ամեն ազդեցութիւնք , զորս երկրային մեր հինգ զգայարանք միահամուռ զօրեն ընծայել մեզ . . . Նորածագ արեւուն ճառագայթներով լուսաւորուած տեսակ մը

պալատ ամարային , մեր օդահերձ վենետիկեան նաւակին ներքեւ կը պարզուէր աչաց մօտս եղող գեղունահին , ոյր թեւերը կը թըրթըռային անհամբերութեամբ , իւր փափկիկ ոտն հանգչեցուց ծաղկեփնջի մը վերայ՝ որ կը ցցուէր զոյգ մը խնկաբոյր շառաւիղներու միջեւ :

— « Պիտի վերադառնա՞ս դու Երկիր , » ըսաւ նա՝ թեւերն ինձ կարկառելով :

— Երբէ՛ք , գոչեցի . . . Եւ նետուեցայ իւր գիրկը . . . :

*
* *

Բայց նոյն հետայն , գտայ զիս կրկին իմ պուրակիս մօտ , մէնաւոր , ի զառիթափն այն բլրին , որոյ ստորոտն ոլոր ոլոր կ'ոլորտըկէր Սէն գետը , դարիւ դարիւ գալարեւ լով :

ԵՐԲԷ՛Ք . . . կրկնեցի , ճգնելով որ կրկին ձեռք ձգեմ՝ այն անուշ երազն որ թռած էր : Ո՛ւր էի ես : Զքնաղ էր տեսիլն :

Արեւը նոր մայրը մտած էր , և Հրատ մոլորակն այն պահուն լուսափաղփ՝ կը ճաճանչէր արդէն երկնից մէջ :

Ա՛հ , ըսի , մինչ փախստեայ շող մը կ'ողողէր զիս , հո՛ն էի ես : Հոն , մի և նոյն ձգողութեան վերայ որորուելով , երկօքին ընթերակաց մոլորակք զիրեար կը դիտեն անապակ միջոցին մէջէ : Այդ երկնային եղբայրութեան մէջ միթէ չե՞նք տեսներ առաջին պատկեր մը յաւիտենական ուղեւորութեան : Աշխարհի մէջ ոչ եւս Երկիրը միայնակ կայ : Ա՛սկսին բացուիլ համատարած տեսարանք անհունին : Հոս կամ ո՛ւր որ ալ բնակիմք , գաւառի մը կամ աշխարհի մը քաղաքացիները չեմք մենք , այլ ճշմարտիւ՝ երկնաքաղաքացիներ :

ՔԱՄԻԼ ՖԼԱՄԱՐՈՆ

ՆՈՐԱՎԵՊ

ԱՆՇԵԼԻՔ

Իրիկուն մը գնդապետ Տ . . . որ մեծ հաճոյք կ'ըզար իւր երիտասարդութեան պատահարները պատմելով, հետեւեալը պատմեց մեզ .

— 1815 ին թողած էի բանակն . հարկ չկայ ըսել թէ ինչո՞ւ, որովհետեւ կը ճանչէք իմ կարծիքներս : Ասպարէզս այդ կարծիքներուս զոհեալս յիմարութիւնն ունեցած էի : Հարուստ չէի, առ առաւելն երկու հազար ֆրանք եկամուտ ունէի, և թէեւ երիտասարդ, որոշեցի այդ համեստ գումարով ապրիլ դաւառական քաղաքի մը մէջ և բոլոր ժամերս նուիրել սովորելու մի քանի ուսումներ, որոց համար ժամանակը միշտ պակասած էր ինձ : Որպէս զի որոշումս բնաւ վտանգի չենթարկուէր, պէտք էր որ շատ ճանճրալի և կարի տխուր քաղաք մ'ընտրէի : Ընտրեցի Ն . . . քաղաքն, ճանճրութեան թաղուհին : Ռուսական արշաւանքին մէջ ո՛չ մէկ կողմն սառած էր և կապոյտ լողիկիս վրայ կը կրէի Պատուոյ Լէգէոնի կարմիր ժապաւէնը որ միշտ կը վայել և չէի ուզեր տարփուհի ունենալ, բան մ'որ տարփուհի ունենալու ապահով միջոց մ'է : Մենութեան և ուսումնասիրութեան համար ունեցած սէրս սակայն մարդատեցութիւն չէր, եւ հասարակաց սեղանին վրայ, ուր կը ճաշէի, քանի մ'անձանց հետ ծանօթացայ, ի մէջ այլոց նոտարի մը հետ որ հաճոյք կը համարէր մեզ հետ ճաշել՝ փոխանակ իւր կնոջ հետ ճաշելու : Այս նոտարը չաքարախառն ջուրով երեկոյթներ կ'ուտայ մերթ ընդ մերթ, զորս « փոքրիկ հանդէսներ » կ'անուանէր չեմ գիտեր ինչո՞ւ, և ա՛յնչափ ըստիպեց որ վերջապէս ընդունեցի իւր վեցերորդ հրաւերը : Պարելու պէս բաներ կ'ընէին այդ նոտարին տունն, որ կը յիշեմ թէ Պ. Բէլաշ կը կոչուէր, անուն որ միշտ հաճոյալի թուած է ինձ . ետքի՛ն և ուրիշ անմեղ խաղեր կը խաղային, և կէս գիշերին կանայք իրենց մուշտակները կը հագնէին, որովհետեւ այն ատեն, մանաւանդ դաւառաց մէջ, մուշտակը մեծահամբաւ արդու-

զարդ. մ'էր, եւ ամեն որ իւր տունը կը վերադառնար : Այդ Պ. Բէլաշի երեկոյթներուն կը գտնուէր խարտեաչ և գիրուկ այրի մը որ երեք երկոտասանեակ գարուններ անցուցած էր և որ իւր ամուսնէն ընդունած էր՝ ի մէջ այլոց՝ տիկին Ռոպինէ անունը : Ամեն մարդ տարօրինակ անուններ ունէր այդ տան մէջ : Գեռ կը յիշեմ երկու օրիորդներ Ֆիլիթար մականունով, երկու երկւորեակներ միշտ տոգոյն դիմօք, կարմիր, մեծ ու սրածայր քիթերով և « Սէվինէ » ձեւով յարդարեալ մազերով : Այդ խեղճ աղջիկներն ա՛յնքան երկայնահասակ ու վտիտ էին որ զայնս միշտ միատեղ և միշտ ուղղաձիգ տեսնելով կ'ըսէին .

— Ա՛հ, աւատիկ թիւ տասնեւմէկն որ ներս կը մտնէ :

Բայց խնդիրն այդ Ֆիլիթար օրիորդաց վրայ չէ : Վերադառնալով տիկին Ռոպինէի, կարելի էր ըսել թէ տգեղ չէր : Փոքրահասակ էր, գիրուկ, թոմբուլիկ, վեր դարձած քիթով, վարդադեղ այտերուն վրայ փոսիկներով, սպիտակափայլ սկուայներով, փոքրիկ այլ գրգռիչ աչերով . բարձրաձայն կը խնդար ու շաղրութիւն հրաւիրելու համար, շատ կը մերկանար, որով իւր վրայ կեդրոնացեալ կը պահէր այն ուշադրութիւնը զոր իւր ծիծաղն հրաւիրած էր . թեւերը քիչ մը կարմիր էին, մատները քիչ մը քաշուած և ոտներն հրապուրիչ : Ծածկեցէք այդ գլուխը փաթթոցի ձեւով յարդարեալ մազերով, ծածկեցէք այդ մարմինը ծաղկազարդ կտաւէ չըջազդեստով մը, պարանոցը զրէք բուստեայ մանեակ մը, ամեն զոյնէ մատանիներ ձախ ձեռքը, ասոնց հետ միատեղ զգայնական դէմք մը տուէք անոր և կ'ունենաք թէ՛ ամբողջութիւնն և թէ՛ մանրամասնութիւնը տիկին Ռոպինէի, հասութաւու և անունն արձանագրեալ ֆրանսական պարտուց մեծ տետրակին մէջ :

Կապոյտ լողիկս, կարմիր ժապաւէնս և քսանեւհինգ տարիներս հաճելի եղան տիկին Ռոպինէի, որ ինձ պատմեց իւր կեանքը, իւր բերնին մէջ թափանցիկ՝ նման բիւրեղի : Ըրաւ չըրաւ ճաշի հրաւիրեց զմեզ, տանէրն և զիս : Վաչտ մը կշտացնելու չափ ճաշ մը տուաւ մեզ, անուշահոտ ու ախորժակամ գինիներ խոցուց, սեղանին տակ ոտքիս դալաւ, մեկնելու միջոցին ձեռքս սեղ-

մեջ և ըստ ինձ թէ ամեն օր տունն էր, ի բաց առեալ կիրակի օրերն, ուր կ'երթար Պ. Բէլաշի երեկոյթին:

Մարտոզական այցելութիւն մը տալ պարտէի նմա: Արդ, երբէք ու է այցելութիւն ա'յնքան արժանի չէ եղած իւր անուան, որովհետեւ բնաւ մարտոզութիւն մ'այնքան երկար չտեսեց: Ասկածներ ունէի այդ այցելութենէն առաջ դալիք վտանդին վրայ: Դժբաղդաբար առաքինի Յովսէփ Գեղեցիկի պէս պատմութեան մը չունէի որ միախառնու ատենա թողութի, այնպէս որ ի յարգանս կապոյտ լօղիկիս զոր յաճախ վերանորոգել թոյլ չէր տար ինձ իմ երկու հազար Փրանքի եկամուտս, ես իսկ մնացի:

Արեւմտեան աւաստիկ, առ խնայողութեան, տիկին Ռոպինէի պաշտօնը եղայ: Օրն երեք անգամ չորս էջով նամակներ կը գրէր ինձ և « լեռնակուտակ » կը յարգարէր մագերէն աւելի հաճոյ լինելու համար ինձ: Եթէ այդ կիներն ուզէր պարզ լինիլ, հրապուրիչ կին մը պիտի լինէր. ընդհակառակն, աշխարհիս ամենէն ծաղրելի կիներն էր, առանց հաշուելու որ Թոմօ Գեորգի և Մեկեղէշ Սեբեա երգելու մենամուրութիւնն ունէր՝ ընկերակցելով դաշնակի մը վրայ, որոյ ծայրը մարդուս ջիւղերը թունտ կը հանէր: Որչափ ժամանակ որ տեսէր երգը, թէ՛ միայնակ իւր տունը լինէինք, թէ՛ Պ. Բէլաշի տունը, պարտաւոր էի իմ նայուածքս անոր նայուածքին մէջ խորասուզել և կ'սկսէի ես զիս այնքան ծաղրելի դանել որքան զնա, մանաւանդ որ քանի մը փափուքներէ, ժպիտներէ, որովք զմեզ կ'ընդունէին երբ երեւնայինք, — որովհետեւ տիկին Ռոպինէ կը պահանջէր որ թեւս իրեն տայի երեկոյթի մ'երթալու համար —, հասկցայ թէ մեր յարաբերութիւն երեւան ելած էին և ծաղու առարկայ կը լինէի:

Կուզէի խզել այդ յարաբերութիւնները:

Բայց դիւրին գործ չէր այս: Տիկին Ռոպինէ հոգի կուտար իմ վրաս իրեն աղւոր երիտասարդ մը: Դեռ աւելին կար. իմ բռնակարանիս մէկ բանալին ձեռք ձգած էր և բնաւ չսպասած վայրկեանիս կը տեսնէի որ ներս կը մտնէր: Այն ատեն կ'ըսէր թէ ինձ նկատմամբ իւր ունեցած սէրն իրեն մոռցնել կուտար պատշաճից օրէնքներն, իւր համբաւն և իւր անստղիւտ անցեալն, և

թէ՛ եթէ երբէք կին մը գտնէր իմ տունս, նախ զայն կը մեռցնէր և ապա ինքզինքն:

Գիտէի թէ մինչեւ ո՛ր աստիճան անկեղծ էին այս սպառնալիքներ. բայց սա ճշմարիտ էր որ անտանելի կեանք մը կը վարէի:

Տակաւ առ տակաւ ա'լ դիմանալու կարողութիւնս չմնաց: Տիկին Ռոպինէ այլ եւս չգոհացաւ ցերեկին գալով. երբ երեկոյին տուն կը գառնայի, չորս անգամուան երկուքը կը տեսնէի որ պատուհաններս լուսաւորուած էին:

Ամեն պատուաւոր միջոց ի գործ դրի մեր յարաբերութեանց վերջ տալու համար. առարկեցի որ հիւանդ եմ, ըստ թէ պիտի դար զիս խնամելու. պատրուակեցի թէ հարկ էր որ մեկնէի, ըստ թէ ետեւէս պիտի գար. պիտի ըսել տայի որ մեռած եմ, բայց վստահ էի որ պիտի ուզէր օրհնած ջուր սրսկել երեսս:

Սակայն կարելի չէր այս կերպ կեանք վարել: Այս դժբաղդութեան դարման մը տանելու համար միակ միջոց մը կը մնար ինձ, այն էր ինքզինքս միտթարելու խնդիրը: Այս գաղափարն յուսահատութենէ ծագում առած չէր մտքիս մէջ: Քանի մ'օրէ ի վեր նշմարած էի բաղադրին մէկ անցքին մէջ որ ամեն կողմէ երկաթեայ վանդակաձուլերով դոցուած էր, նշմարած էի կ'ըսեմ, խանութի մը մէջ, տասնեութ տարեկան հրապուրիչ աղջիկ մը որ միշտ գրասեղանին առջեւ կը նստէր և օրն ի բուն կ'աշխատէր: Երեկոյեան ժամ իննին խանութէն կը մեկնէր և իւր խուցը կը վերադառնար, որ տան մը հինգերորդ յարկը կը գտնուէր: Տան դուռն անցքին մէջ կը բացուէր: Այս բաներն իմացած էի խանութին բոլորտիքը սլոգտալով և խօսակցելով անցքին պահապանութիւնն ընող անկար զինուորի մը հետ, որոյ պաշտօնն էր նմանապէս վանդակափեղկը դոցել:

Այն հաճոյքը զոր կ'զգայի տեսնելով Անժէլիքը, — այս էր մանկամարդ գործաւորուհւոյն անունը, — մանաւանդ մեծ էր սա պատճառաւ որ սախալուած էի գնել այդ հաճոյքը: Երեկոյներն աղատ լինելու համար, պէտք էր որ ցերեկն երկու երեք ժամ անցունէի տիկին Ռոպինէի հետ լսելու համար « կը սիրեմ զքեզ » ըսելն և անոր յեղյեղութիւն թէ զինքը կը սիրեմ:

Արդ, եթէ աշխարհիս վրայ տանջանք մը կայ, այն ալ այդ է: Ասոր համար է որ օձիքս ձեռքէն ազատելուս պէս անցքին կողմը կը վազէի և վիշտերս կը մոռնայի դիտելով զԱնժէլիք, որ վերջապէս նշմարած էր իմ յաճախակի այցելութիւններս և հասկըցած էր թէ ինքն էր անոնց պատճառը: Բընան և հինգ տարիներս, կապոյտ լօղիկս և կարմիր ժապաւէնս բաւական մեծ դեր խաղացած էին և ես ալ երբեմն երբեմն տեսած էի որ ծաղկահասակ գեղանի աղջիկն իմ վրայ յառած էր իւր ցոլնարկը: Սիրտս տրոփած էր, որովհետեւ իրօք Անժէլիք սիրուն էր, և իւր շնորհալիլ գլուխն, զոր դժուարաւ կը նշմարէի ապակիին ետեւ կախուած գտակներու և ժապաւէններու մէջտեղէն, ինձ շացում պատճառելու ձիրքն ունէր: Մարդ չատ չուտ կը սիրահարի կնոջ մը ուսկէց չսիրուելու երկիւղն ունի, երբ կը պաշտուի կնոջմէ մը զոր չսիրեր: Շատ մարդիկ որք երկու տարիուհիներ ունէին, մին զոր կը սիրէին, միւսն ուսկէց կը սիրուէին, տեսած են, երբ միայն իրենց նախամեծար համարած կիներն ունէին, թէ բաղդատմամբ միայն ա՛յնքան սիրահար էին, և թէ մէկէն բաժնուելով, այլ ևս չէին սիրեր միւսը: Այդ նմանի սա բանտարկելոց որք կը կարծեն թէ երբ ազատ լինին, իրենց ժամանակը պիտի անցունեն դաշտերուն մէջ վազվզելով, և թէ աշխարհիս մէջ բաւական տեղ չպիտի գտնուի իրենց համար: Իրենց աղատութիւնը կը գտնեն, և ամբողջ ամիսներ կ'անցունեն առանց իրենց խուցէն դուրս ելնելու:

Սակայն ես այդ պարագային մէջ չէի դնուեր: Անժէլիքը չէի սիրեր միայն Տիկին Ռոպէնէէ ձանձրացած լինելուս համար, այլ կը սիրէի զնա իւր գեղեցկութեան համար: Արդարեւ գեղանի էր իւր խարտեալ մազերով, որք ինչպէս նորաձեւութիւն էր այն ատեն՝ գլխուն դագաթին վրայ ժողվեալ էին սատափեայ մեծ սանտրով մը, իւր խոշոր, կապոյտ, անուշ, անհանգիստ և կասկածոտ աչերով, իւր բոսորագեղ գոյնով և իւր պչրազարդ պարզութեամբ:

Իրիկուն մը, այն ժամուն ուր սովորութիւն ունէի անցքն երթալու, պահուըտեցայ այն կերպով որ կը տեսնէի առանց տեսնուելու: Դիտմամբ ըրի այսպէս: Անժէլիք

ամեն վայրկեան ապակիին ետեւէն փողոց կը նայէր և զարմացած կը թուէր իւր փրնուածը չտեսնելով:

Որովհետեւ այսպէս սրտատանջութիւն կը պատճառէի գեղանի աղջկան, — որովհետեւ տարակոյս չունէի թէ փողոցին մէջ զիս կը փնտռէր իւր աչերով, — ուրեմն իրմէ սիրուելու կարելիութիւն կար:

Խանութ մտայ և ասեղնադործեալ թեւանոցներ ուզեցի:

Թեւանոցները գնեցի, բայց ժամու մը չափ խօսակցեցայ անոր հետ. տեսայ որ սրամիտ էր:

Յետոյ տուն վերադարձայ և հոն գտայ տիկին Ռոպէնէն:

Հետեւեալ օր վերստին գնացի տեսնել զԱնժէլիք, յետոյ յաջորդ օրն, յետոյ ամեն օր:

Օձիքներ և ժապաւէններ գնելով կը պարպէի քսակս: Խանութին տիրուհին, որ այս կերպով նոր յաճախորդ մը վաստկած էր, աչք կը գոցէր այս գնմանց շարժառիթին վրայ:

Գործերս աղէկ կ'երթային: Զգալի յառաջդիմութիւններ կ'ընէի Անժէլիքի սրտին մէջ, և եթէ տիկին Ռոպէնէն չըլլար, կեանքս պիտի անցնէր յուսալիլ և բերկրապատար, մայիսի արշալուսոյ մը նման վարդագեղ:

Բայց անցքին մէջ արդէն մեծ աղմուկ հանած էի: Գրացիները նշմարած էին այն կապոյտ լօղիկով պարոնն որ ամեն օր կուգար ասեղներ ու ժապաւէններ գնելու, և շաղակրատութիւնը սկսած էին:

Արդ, Անժէլիք պարկեշտ աղջիկ մ'էր որ մեծ կարեւորութիւն կուտար իւր համբաւոյն:

Երբ պարկեշտ աղջիկ կ'ըսեմ, չեմ ուզեր ըսել թէ կրնար մրցիլ ժան տ'Արքի հետ. կը կարծեմ իսկ թէ իւր կենաց մէջ ունեցած էր օրեր, որք կրնային վիպասանութեանց նիւթ մատակարարել Բայց ինչ որ ալ լինէր, այս բաներն ամենէն ծանօթ չէին, և ես կարող չէի պախարակել անցեալ մը որ զգալի կերպով կը դիւրացնէր այն ախտառութիւնն զոր կ'ստանձնէի այդ աղջիկը դրաւելու համար:

Վերջապէս, իրիկուն մ'ինձ ըսաւ թէ այլ եւս պէտք չէր որ խանութ երթայի և թէ այս բան կրնար վնասել իրեն. բայց

Թէ հետեւեալ օր միջօրէին ատենները ժանեակներ պիտի տանէր յաճախորդի մը տունը, Թէ կրնայի ծանրուել վրայ գտնուել, և ինձ կը նշանակէր այն փողոցներն ուսկէց պիտի անցնէր, բաւական ամայի փողոցներ, յորս կէս ժամու չափ կրնայինք խօսակցիլ իրարու հետ :

Այս կերպով քանի մ'անգամ հանդիպեցանք իրարու . գիտէր Թէ սիրահարած էի իրեն, և խոստովանեցաւ Թէ հաճելի էի իրեն . երդնուլ տուաւ ինձ Թէ ուրիշ կին չէի սիրեր . ես ալ երդուայ մաղթելով որ իրաւ ըլլար, և այն ատեն ինձ ըսաւ այն անկեղծութեամբ զոր ունեցուլ լատանցայնքան շնորհատարաւ կը լինինք :

— Լաւ ուրեմն, այս իրիկուն ժամատանեւմէկին տունս եկուր :

Այս բաները տեղի կ'ունենային յունիվար ամսոյ մէջ :

Երեկոյն բարեկամներուս միոյն տունն անցուցի : Ժամ տասնեակէսին տունէն դուրս ելայ և, մեկնոցիս մէջ փաթթուած, անցքին ծանրան բռնեցի : Անդ հասնելու համար, հարկ էր որ իմ բնակած օթեւանիս առջեւէն անցնէի, և անցնելու ատենս տեսայ որ պատուհաններս լուսաւորուած էին . չկրցայ ծիծաղաւ բռնել մտածելով այդ խեղճ տիկին Ռոպինէի վրայ որ ինձ կ'ապասէր, մինչդեռ ես Անժէլիքի տունը կ'երթայի : Քիչ ատենէն վրէժս պիտի լուծէի . հետեւեալ օրը կուի մը պիտի ունենայի անոր հետ, և իմ նոր սիրոյս կըթնած, պիտի կարենայի իրեն ըսել Թէ չէի սիրեր զինքը :

Հասայ անցքին վանդակադրան առջեւ որ գոցուած էր, և զանգակը զարկի :

Լռիկ կամարին արձագանգը կրկնեց զանգակին ձայնն, և խոշոր ձայն մը գոչեց .

— Ի՞նչ կ'ուզէք :

Ձէի կրնար բարձր ձայնիւ ըսել ինչ որ կ'ուզէի :

— Ներս մտնել կ'ուզեմ, պատասխանեցի :

— Ուրեմն անցքին մէջ կը բնակիք, հարցուց ձայնն որ կ'սկսէր մարդկային մարմնոյ ձեւ առնուլ և որ կը յառաջանար զինուորի զգեստին տակ :

— Այո՛, անցքին մէջ կը բնակիմ :

— Չարմանալի բան, կը կարծէի Թէ ամեն մարդ վերադարձած էր :

Եւ անկար զինուորը վանդակադրան մօտեցաւ բանալու համար . բայց անկէ առաջ ուշադրութեամբ ինձ նայեցաւ և տեսնելով որ ես անցքին վարձակալներէն չէի զորս ամենքն ալ կը ձանչէր, բանալին վերստին զրպանը դրաւ ըսելով .

— Գիտէի որ ամեն մարդ վերադարձած էր . գործերնուդ գացէք, դուռը չեմ բանար :

— Ինձ նայէ՛, բարեկամ, ըսի այն ատեն խոնարհ ձայնիւ մը որ պաղատական շեշտեր ունէր, մօտ եկէք որ ցած ձայնիւ խօսիմ ձեզ հետ :

Եւ միեւնոյն ատեն կը հնչեցնէի երկու երեք հատ հինգ ֆրանքնոցներ :

Կերբերոսն հասկցաւ և երեսոս ի վեր գոչեց իւր խցիկին դուռը գոցելով .

— Ինձ տրուած պատուէրը խիստ է : Իմ տեղս կորսնցնելու փափաք չունիմ . դընացէք պառկիլ . ադ կէ ադէկ բան չէք կորնար ընել :

— Լուցէ՛ք, այդ ի՞նչ աղմուկ է, պօռացին վերէն պատուհանէ մը :

Եթէ նոյն պահուն զինուորը ձեռքս անցնէր, կը խեղդէի առանց յարգելու մեր փառքն, որոյ ամենէն տղեղ բեկորներէն էր :

Պէտք էր որ որոշում մը տայի : Եթէ պնդէի, ծաղրելի և միանգամայն անօգուտ գայթակղութիւն մը պիտի յարուցանէի :

— Անժէլիք պէտք է որ այս բանս նախատեսած ըլլար, ըսի ինքնիրենս, միայն Թէ ուղած չըլլայ գէշ կատակ մը խաղալ ինձ :

Կէս ժամու չափ ստորեցայ վանդակադրան առջեւ, յուսալով որ Անժէլիք, իմ չդարա տեսնելով, պիտի կռահէր Թէ ինչ կ'անցնէր և պիտի իջնէր դուռը բանալու . բայց չտիպազանցութիւն էր ասանկ բան մը պահանջել անկէ, և ոչ զոք տեսայ :

Բնակարանիս ծանրան բռնեցի :

Քար ճաթեցնելու աստիճան ցուրտ կար : Քիթս բոլորովին կարմրած էր :

— Աւստիկ սիրային ժամադրութիւն մը որ ադէկ չվերջանար, ըսի ինքնիրենս՝ արագ արագ ընթանալով տաքնալու համար և քաղաքին սալայատակը ճարձատեցնելով կօշիկներուս կրուկին տակ :

Սենեկիս մէջ միշտ լոյս կար :

— Ա՛հ, տիկին Ռոպինէ, ըսի այն ատեն, որչափ պիտի խնդայիք վրաս եթէ գիտնա-

յիք թէ ի՞նչ կ'անցնի : Բայց չպիտի ըսուի որ իմ պարտութենէն բան մը չահեցաք , և կրողը տանի զիս թէ այս գիշեր դէմքս տեսնէք , հակառակ այս սարսափելի ցուրտին : Սպասեցէք ինձ , տիկին Ռոպինէ , սպասեցէք ինձ :

Ի խորոց սրտի կ'ատէի այրին :

Գիշերն ի բուն պողտեցայ : Կը սառնէի , բայց նախամեծար կը համարէի զայս քան կրակիս անկիւնը գտնուիլ , տիկին Ռոպինէի հետ մէն միայնակ : Ն . . . ի բողբոլքը դարձայ : Ո՛հ , քաղաքն ի՞նչ սոսկալի տեսիլ մ'ունէր գիշերը , տաան աստիճան ցրտութեամբ , վերջապէս արշալոյսը ծագեցաւ և փողոցներն սկսան կենդանութիւն զգենուլ :

— Անշուշտ մեկնած լինելու է , ըսի ինքնիրենս :

Տաքնալու համար դաւաթ մը սուրճ իրմէ՛յ յետոյ բացուած առաջին սրճարանին մէջ , փողոցիս ճանբան բռնեցի : Սենեակս ելնելէ առաջ , ուղեցի ապահով լինել թէ ոչ որ կար անդ : Ուստի , պատէն կախուած բանալիս առնել վերջ , ըսի ծառային որ դռնապանի ալ պաշտօն ունէր .

— Սենեակս մարդ չկա՞յ :

— Ոչ , պարոն :

— Ստիպեալ կարծեմ թէ մէկը կար :

— Այո՛ , պարոն , բայց այդ անձը մեկնեցաւ , որովհետեւ աւասիկ ձեր բանալին :

— Այդ անձը մեկնելու ատեն ի՞նչ ըսաւ :

— Շատ դու՛ չէր թուեր , պատասխանեց ծառայն : Մնաց որ սեղանին վրայ նամակ մը պիտի գտնէք : Ա՛հ , պարոնը շատ անգթութեամբ կը վարուի կանանց հետ , յարեց մանչն այն ընտանութեամբ որ թեւանի սպասաւորաց որովիչ նշանն է , մանաւանդ դաւառաց մէջ : Այդ փոքրիկ կիւնը շատ սիրուն էր և խարտեաչ գեղեցիկ մազեր ունէր :

— Սեւ մազեր ըսել կ'ուզէք :

— Ոչ , պարոն , խարտեաչ մազեր . ես շատ աղէկ տեսայ երբ սենեակը գացի կըրակ վառելու համար , որովհետեւ կը դողդըղար :

— Այդ կին ուրեմն սովորաբար եկողը չէ՞ :

— Ոչ , պարոն :

— Ա՛հ , ի՞նչ դժբաղդութիւն , դռնեցի , և սոսկալի նախադգացում մ'անցաւ մտքէս :

Սենեակս վազեցի , որ տակաւին տար էր կնոջ մը ներկայութեամբ , և սեղանին վրայ ինձ ուղղեալ նամակ մը գտայ :

Բացի զայն և աւասիկ ինչ որ կարդացի .

« Վախնալով թէ անցերն դուռը չբանան ձեզ ժամ տաան և մէկին , և թէ դուք ալ գէշ կատակ մը խաղալու դիտաւորութիւնը չվերագրէք ինձ , ուղեցի խոստումս պահել և անակնկալ բան մ'ընել ձեզ : Հոս եկայ ձեզ սպասելու . անտարակոյս ուրիշ կին մը զձեզ վար դրած էր : Այդ միակ պատճառն է որ զձեզ արգիլած է տուն դառնալու : Գիտէք որ ես նախանձոտ եմ , մանաւանդ հպարտ եմ : Երեկոյեան ժամ տաանէն մինչեւ առաւօտեան ժամ ութը ծաղրելի եղայ : Այս բաները չեն ներուիր բնաւ : Ուրեմն ու եւ է բացատրութիւն անօգուտ է մեր միջեւ : Միշտին կը մաղթեմ ինչ որ ես ստիպուեցայ երազել :

«ԱՆԺԷԼԻԲ»

Եւ ես որ գիշերն անցուցած էի փողոցին մէջ զոխալով :

Ձէի ուղեր Անժէլիքի բացատրել իմ բացակայութեանս բուն պատճառը : Ուստի սուտ բան մը հնարեցի որուն հաւատալ չուզեց և որ բնաւ չփոխեց անոր որոշումը :

Այլ եւս չուզեց անունս իսկ լսել :

ԱԼԷԿՍԱՆԸՐ ՏԻԻՄԱ ՈՐԴԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՂ ՌԱՄԿԱՅ

Ի ՎԵՐԱՅ Ս. ԵՐՈՒՍՏԱՂԵՄԻ

Սուրբ Գարութեան դուռն տեսայ ,
Բարձր զուպպէն պայծառ շինուած .
Մարմեր սիւնն համբուրեցի ,
Բացուեր է տեղն լուս ելած :

Սուրբ գերեզման լոյս է պայծառ ,
Համբուրողն պիտի արդար .
Լոյսըն ծագեաց վրան կամար ,
Ձաշխարհս ամեն լուսաւորեաց :

Քրիստոսի բանան կացի ,
Երկրպագով համբուրեցի .

Չարչարանքն մտածեցի,
Կիտցա խելքս կիւէս գնաց:

Քառուն և մէկ ոտը Կիւտ խաչ ելայ,
Տառներկու աղբս կիւ հաւատայ:
Սրբուհին Դշխուն Հեղինայ,
Կտայ խաչն շատ ուրախացայ:

Հրաշալի Սուրբ Գողգոթայ,
Գերեզմանն է հայր Աղամայ:
Ով որ տեսնայ կիւ զարմանայ
Նախշուն խալին արինն ներկաց:

Սուրբ վերնատունն Հայոց ժամ է,
Վարդապետաց քաղցր համ է:
Պարիսպն պինան միւկկէմ է,
Սուրբ տաճարն ոսկէ ճրաց:

Սուրբ Յակոբ Տեսուէն եղբայր,
Պերդէն նետեցին անհայր:
Գեթսեմանի տէրէն ի վար,
Խորըն փոս է տեղըն ընկաց:

Սաբկայ իջուցին Գառն,
Երուսաղէմ օրինաց քարն:
Հրեշտակապետ Սուրբ ծառն,
Տէր Յիսուս որ պերին կապաց:

Սուրբ Համբարձում Զիթենաց,
Ուխտ արի և Գալիլեայ:
Ղազերոսն փէթանեայ,
Գերեզմանին վրան ծածկաց:

Պայծառ Սուրբ Յակոբայ վանքն,
Երախտաւոր միաբանքն:
Սրբազան Սուրբ Պատրիարքն,
Սուրբ հովիւ է վարդապետաց:

Մարգուան

Ս. Ս.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

22-28 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Տէրութիւնը կը շարունակեն իրարու ձեռքէն յափշտակել Ափրիկէի անտէր հողերն: Այս կողմէ նորագոյն լուրը սա է թէ Բարեյուսոյ Հրուանդանի Անգլիացիք, խմանալով որ Գերմանը մտադիր են զրաւել Զուլուստանի եղբրաց վրայ կարեւոր դիրք մը, Մէնդ-Լուսիա ծովախորշն, իրենք աճատալա-

րած են անոնց առաջըն առնուլ, և անգլիական դրօշը պարզած են յիշեալ կէտին վրայ: Ճիշդ ինչպէս, Ովկէանիոյ մէջ, Գերմանը, խմանալով որ Աւստրալիոյ Անգլիացիք մտադիր են նոր կղզիներ դրաւել, անոնց առաջըն առած էին, նախապէս իրենք պարզելով գերմանական դրօշն յիշեալ կղզեաց վրայ: Եւ ինչպէս Գերմանաց այս փութաջանութիւնը դժգոհ ըրած էր Աւստրալիոյ Անգլիացիները, Բարեյուսոյ Հրուանդանի Անգլիացեաց փութաջանութիւնն ալ Գերմաններուն դժգոհութիւն կը պատճառէ այժմ:

— Թոնքին զրկուելիք Փրանսական զօրաց թիւը 6000 էն 10,000ի վերածեցաւ:

— Սպանիոյ հիւսիսային կողմերը պատահած վերջին երկրաշարժէն պատճառեալ վնասներն 30 միլիոն կը հաշուին:

— Պիզմարը իշխանը կը շարունակէ համակրանաց արտայայտութիւններ ստանալ Կայսրութեան ամէն կողմերէն և ամեն կուսակցութեանց մարդոցմէ, 1000 ոսկւոյ վարկի խնդրոյն առթիւ. միայն դեկտեմբեր 26ին և 27ին նտացաւ 144 հեռագրեր և ուղերձներ:

— Ռուսը դեռ վերջնապէս չեն իւրացուցած զԽիվա: Ռուս լրագրեր կը գանգատին թէ Ռուսիոյ և Խիվայի միջեւ յարաբերութիւնը օր ըստ օրէ աւելի կը խանգարին: Կը յուսացուէր թէ Թագադրութեան հանդիսին առթիւ Մոսքուա գալէն ի վեր խանն առաւել ենթակայ պիտի լինէր ռուսական աղքեցութեան, բայց առաջուան չափ թշնամական ընթացք մը կը բռնէ: Կը հովանաւորէ ամեն տեսակ կասկածելի մարդիկ, և աւազակաց հետ կը բաժնէ անոնց կողոպուտները: Քրանսնովա տըսքի և Խիվայի միջեւ ձանքան, որ ցարդ տպահով էր, աւազակներով վարակեալ է, որք կարաւանները կը կողոպտեն և Խիվայի խանին պաշտպանութիւնը կը վայելեն:

— Պ. Կլատսթոն դեկտ. 28 ին 75 րդ. տարին մտաւ քաջառողջ վիճակի մէջ: Ամեն կողմէ շնորհաւորութիւններ և նուէրներ ըստացաւ սոյն բարեբաւտ առթիւ:

— Գերմանական լրագիրք կը ծանուցանեն թէ Քոնկոյի Միջազգային Ընկերակցութիւնն, որ իբրեւ անկախ կառավարութիւն ճանչցուած է արդէն մեծ Տէրութիւն:

ներէն, միապետական ձեւ պիտի ունենայ : Բայց թէ ո՞վ պիտի լինի Թագաւորը կամ Իշխանը, չի ծանուցուեր դեռ :

— Ֆրանսայի յեղափոխականութենէն, Լուիջ Միշլէ, որ ժամանակէ մ'ի վեր բանտարկալ էր, խելագարեցաւ :

— Բեդրասպուրկէ կը հեռագրուի դեկտ. 29 թուով թէ «Չարն հաւանեցաւ թուրքոյ-հայկական սահմանագլխոց վրայ շինուելիք ամբողջեանց ծրագրոյն, զոր պատերազմական նախարարը մատուցած էր իրենն» :

— Լորտ Ուոլլի փութով յառաջ կը մղէ իւր զօրքեր, և անգլիացիք շատ գոհ են այս յառաջխաղացութենէ : Զօրավետը տոմսակ մը ստացեր է Կորտոն զօրավարէն, ծանուցտնող թէ դեկտ. 14ին ամեն ինչ լաւ վիճակի մէջ էր ի Խարդում :

— Անգլիոյ նախարարաց խորհուրդն անցեալ շաբթու երկու անգամ յարտաստ. սովոր նիստ գումարեցաւ, եղիպտական ելեւմտից կարգադրման նկատմամբ Փրանսական կառավարութեան հակառակարկները քննելու համար, որք կէս-պաշտօնական ձեւով անգլիական կառավարութեան հաղորդուած են : Ո՛չ մի տէրութիւն պատասխանած չէ տակաւին Անգլիոյ, որովհետեւ նախաձեռնութիւնը Փրանսայի թողուած է :

— Գերմանական կառավարութիւնն առաջարկեց Ֆրանսայի՝ նոր դեսպանախորհուրդ մը գումարել ի Փարիզ եղիպտական խնդրոյն համար : Նրա Ֆրանսա հաւանութիւն տայ այս առաջարկին, Պիլմարք իշխանը Ֆրանսայի հետ միաքանութեամբ անգլիական կառավարութեան պիտի ներկայացնէ զայն :

— Ֆրանսայի պատերազմական նոխարար Քամբընոն զօրավարն հրաժարական տուաւ և ընդունուեցաւ : Բանակին 17 ռդ. դունդին հրամանատար Լըվալ զօրավարը պատերազմական նախարար անուանեցաւ :

— Կալիչիոյ Սամպու քաղաքին մէջ վերջերս դատուեցան 36 անձինք, զխաւորապէս Հրեայք, Քրիստոնէից դէմ յարուցեալ կռուոյ մը պատճառաւ, յորում քանի մը քրիստոնեայ գործաւորներ մահացու վէրքեր ստացած էին : 280 վկայք կային դատարանին մէջ : Կռուոյն շարժառիթ եղած էր սուտ լուր մը թէ տեղւոյն Քրիստոնեայք ջախջախեր են Հրէից Տասնաբանեայ Պատուիրանաց տախտակներն : Ամբաստանեալներէն 27 անձինք յանցաւոր դատուեցան, եւ 8էն 12 ամիս բանտարկութեան դատապարտեցան :

Ն Ե Ր Փ Ի Ն

Թէհրանի Օսմանեան նախորդ դեսպան Ֆախրի պէյ, որ մայրաքաղաքս կը գտնուի, արտաքին գործոց նախարարի խորհրդական անուանեցաւ Տատեան Յարութիւն էֆէնտիի տեղ : Նորընտիր խորհրդականը պատիւ ունեցաւ շաբաթ օրը Վեհ. Սուլթանին ներկայանալու :

— Բէթիի վարչութեան խնդրանք արքունական բոլոր ազադակաց մէջ ծխախոտի մշակութիւնն արգիլուեցաւ բարձրագոյն հրամանաւ :

— Կայսերական կառավարութիւնն որոշեց որ կամուրջներու, նաւահանգիստներու և խճուղեաց շինութեան յատկացեալ մեքենայներն ու գործիները մաքսէ ազատ լինին, ինչպէս էին արդէն գործարանաց, խճուղեաց և այլ հանրային հաստատութեանց յատկացեալ մեքենայք, գործիքներ և նիւթեր :

— Դատական նախարարութիւնը վերջին օրերս շրջաբերական մ'ուղղեց Թուրքիոյ դատական քննիչներուն և ընդհանուր դատախազներուն՝ ի մասին Կայսերական անձնական Գանձուն և անհատից միջեւ վարուած դատերու ծախուց :

Այս տեսակ դատերու մէջ, գանձուց նախարարութիւնը դատական ծախքէ և տուրքէ ազատ պիտի լինի, իսկ հակառակ կողմն՝ այսինքն անհատք՝ երբ դատը կորսնցունեն, պարտին բոլոր ծախքերը վճարել :

— Սթամպուլ Կայսերական կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ Մոսկանցի լեռնաբնակ քուրդ ցեղերուն հայ գիւղերու մէջ ի գործ դրած աւառարութեանց և աստատակութեանց վրայ, և կը յարէ թէ այդ չարագործութեանց առաջը կարենալ առնլու համար բաւական թուով զօրք պէտք է ղրկել :

Մոտկանի փոխ-կառավարիչ Զիա պէյ հրաժարական տուած է և ի մօտոյ Կ. Պոլիս պիտի գայ :

— Անցեալ շաբթու Պիղայի Չաթալ-Չամ գիւղին մէջ տեսակ մը հիւանդութիւն ծագած լինելով, Վեհ. Սուլթանին հրամանաւ բժիշկ մը ղրկուած էր հոն և գիւղն ալ շուրջ թայի ներքեւ առնուած : Առողջապահական

խորհուրդը կը ծանուցանէ այժմ թէ, այդ հիւանդութիւն, որ 50 օրէ ի վեր ծագած էր այդ գիւղին մէջ, տարախոտիկ չէ եղեր, հետեւաբար գիւղին հաղորդակցութիւնն արդիւղ չլիթայն վերցուած է :

— Բարձր. Մեծ-Եպարքոսն իւր պաշտօնատան մէջ յատուկ դիւան մը կազմեց, որոյ պաշտօնն է գաւառական իշխանութեանց զրկուած եպարքոսական հրամանաց գործադրութեան հսկել : Եթէ մէկ ամսուան պայմանաժամի մէջ հրամանը գործադրուած չէ, եպարքոսական խորհրդականը պարտագանց պաշտօնէն երեք անգամ ազգարարութիւն ուղղելէ յետոյ, իրազեկութիւնը պիտի ծանուցանէ Ն. Բարձրութեան, որպէս զի տնօրինէ զարժանը :

— Է. Պոլսոյ Առեւտրական սենեակն առեւտրական թերթի մը հրատարակութեան ձեռնարկեց : Առաջին թիւն հրատարակեցաւ Թուրքերէն և Ֆրանսերէն լեզուներով և անջատ թերթերով : Այս երկլեզուեան թերթը շաբաթը մէկ անգամ պիտի հրատարակուի, և առեւտրական, երեսական, ծովային, արհեստական և այլ խնդրոց վրայ տեղեկութիւններ պիտի պարունակէ : Ասիէ զատ ընթացիկ գնոց յատուկ ցուցակ մը պիտի գլնէ ամէն եօթուշաբթի : Տարեկան գինն է Պոլսոյ համար երկու օսմանեան ոսկի և վեցամսեայն մէկ ու կէս ոսկի : Յաջորդութիւն կը մաղթենք Առեւտրական սենեակի այս օգտաւէտ ձեռնարկութեանց :

— Թարիզ կը ծանուցանէ թէ դատական նախարար Հասան Ֆէհմի վաչայի ուղեւորութիւնը վերջնապէս որոշուած լինելով, Ն. Վսեմութիւնն այսօր պիտի մեկնի մայրաքաղաքէն :

Վսեմ նախարարին պիտի ընկերանան կայսերական դիւանի բարձրագոյն պաշտօնեայնէրէն Քէչիտ պէյ և քենեկալն Ահմէտ պէյ, ինչպէս նաեւ Փարիզի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Միսաք էֆէնտի :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային Պատրիարքարանի կողմէ յատուկ պատգամաւորութիւն մը՝ զոր կը կազմէին Կրօնական ժողովոյ Ատենապետ Գեր.

Խորէն Նար-պէյ Սրբազան, Օրթադիւղի Բարալիչ Արժ. Յակոբ Ծ. վարդապետ Սշոտ Փափազեան և Պատրիարքարանի գործակատար Յրէնկեան էֆէնտի, այս չորեքշաբթի օր Ֆէնէրի Պատրիարքարանը գնացին և Յունաց Ս. Պատրիարքին ներկայանալով Ս. Ծննդեան տօնը շնորհաւորեցին և սիրալիր ընդունելութիւն գտան : Յաջորդ օրն ալ Պալլատաց Էկզարքին գնացին ի շնորհաւորութիւն :

— Փաղաքական ժողովն իւր այս չորեքշաբթի աւուր նստին մէջ հետեւեալ տնօրէնութիւններն ըրաւ գլխաւորաբար .

1. Ժողովը տեղեկանալով ի Բեդրասուրկ բնակեալ աղա Կարապետ Եղեանցի մէկ նամակէն թէ բարեյիշատակ աղա Իզմիրեանցի կտակած 20,000 ռուբլի տոմսակները Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ձեռամբ մայրաքաղաքիս ռուսական դեսպանատունն յուղարկուած են՝ հոգելոյս Ներսէս Ս. Պատրիարք Հօր հասցէին, և տեսնելով որ տակաւին չեն յանձնուած Ազգ. Պատրիարքարանի, որոշեց խնդրել Գեր. Խորէն Սրբազանէն որ բարեհաճի այս մասին տեղեկութիւն ստանալ Ռուսական դեսպանատունէն :

2. Նկատելով որ Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետի տեղապահական պաշտօնը վաւերացնող և Պատրիարքական ընտրութիւն հրամայող Պալլատութուն տակաւին չէ հասած, անմիջապէս Թագրիբ մը պատրաստելով, գործակար Յըրէնկեան էֆէնտիի ձեռամբ Բարձր. Մեծ Եպարքոսին մատուցեց :

Ն. Բարձրութիւնն յայտնեց թէ քանի մ'օրէն պիտի արուի Թագրիբին պատասխանը :

3. Կեդրոնական վարժարանի բացման խնդրոյն համար կարգեալ խառն յանձնախումբի անդամներէն Էսաեան Մկրտիչ, Նորատունկեան Յարութիւն և Սըվաճեան Կարապետ էֆէնտիներն երէկ Փաղաքական ժողովոյ ներկայանալով մատուցին այն տեղեկագիր՝ զոր համաձայնութեամբ պատրաստած և ստորագրած էին, և զոր հրատարակեցինք արդէն լրագրոյս նախորդ թիւերէն միոյն մէջ :

Ժողովը նկատողութեան առնելով յիշեալ ծրագիրն, ինչպէս և Ռուսական խորհրդ.

դոյ վերջնագիրը՝ և տեսնելով որ երկու ծրագիրը համաձայն են սկզբամբ, միաձայնութեամբ վաւերացուց խառն Յանձնաժողովոյ ծրագիրն, և որոշեց որ Կեդրոնական վարժարանը բացուի Ղալաթիոյ ոյն շէնքին մէջ՝ որ արդէն նոյն անունը կը կրէ, և միանգամայն յանձնարարեց Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի ընկերութեան ներկայացուցիչ Տեարք, որ ջանադիր լինէին յառաջիկայ տարւոյ սեպտեմբեր 1 ին բանալ Կեդրոնական վարժարանը: Ժողովը իւր շնորհակալութիւնն ու գոհութիւնը յայտնեւ յետոյ, խոստացաւ իւր աջակցութիւնն ընձեռել յիշեալ ընկերութեան՝ ի յաջողութիւն բացման երկուց կրթական հաստատութեանց:

Խառն Յանձնաժողովոյ անդամք ալ փոխադարձ գոհութիւն յայտնելով՝ Քաղաքական Ժողովոյ սոյն տնօրինութեանէն, մեկնեցան:

— Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սմեռ. Եսայի Սրբազան Պատրիարք Հօր առողջական վիճակն օր ըստ օրէ ապաքինելու վրա է: Չորս հինգ օրէ ի վեր Նորին Սրբազնութիւնն ըստ բաւականի հանգիստ կ'անցունէ գիշերները:

ԱԶԳ

Կը խնդրուի մեր գաւառաբնակ մեծարոյ ազգայիններէ որ Արեւելքի և Մասիսի խմբադրութեան ուղղեալ նամակ և դրամ Ուղղակի մեր հասցէին ղրկեն ի նորատունկեան խան, Ղալաթիա, և ո՛չ թէ ուրիշներու միջոցաւ կամ անուղղակի հասցէներով, որով ուշ կը հասնին մեր ձեռք և երբեմն բնաւ չեն հասնիր:

Մասիս շաբաթաթերթի 3730 և 3731 թիւերն սպառած լինելով, կը ծանուցուի մեր այն Մեծ. բաժանորդաց որք չեն կրցած ընդունիլ զայնս թէ ի մօտոյ վերստին տպելով յիշեալ թիւերը պիտի փութամք հասցնել իրենց:

ԱՂՏՆԻ ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆՔ

Գ

Բոլորովին կը բժշկուին իմ գրութեամբ, հիմնեալ գիտական նոր խուզարկութեանց վրայ, նոյն իսկ ամենէն աւելի յուսահատ պարագայից մէջ, առանց երբէք խանդարելու գործարանները: Նմանապէս կը բժշկեմ երիտասարդութեան ժողով, ջանքութեանց և անխորհրդեանց տխուր հետեւանքները:

Գաղտնապահութիւն երաշխաւորեալ

Կը խնդրուի հիւանդութեան ճիշդ նկարագրութիւնը ղրկել:

ՏՈՒԹՈՐ ՊԵՂԼԱ

Անդամ բաղմաթիւ Գիտական
ընկերութեանց

Յ, Բլաս տը Լա Նասիոն Փարիզ

ԼՈՒՍԱՆԿԱՐ

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

677 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱՅԻ 677

ԳՈՒԼԷ-ԳԱՐՈՒ

ԱՄԵՆ ՏԵՍՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ

Փոքր պայտի լուսանկարի վայրէնական
կերպով կը հանդէս

Տեսարանք Կ. Պօլսոյ

Արեւելեան հանդերձից պատկերներ

Լուսանկարչութեան վերաբերեալ նիւթեր

Գինները խիստ դիւրամատչելի են:

ԼՈՒՍԱՆԿԱՐ

ՏՈՔԹՈՐ Տ. ՊԱՊԱԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ ամեն օր բաց ի կիւրակէ և ուրբաթ օրերէ կէս օրէն ժամ մը առաջ կը գտնուի Պահճէ Դարու ՄԵՐՀԱՄԵԹՃԵԱՆ գեղարանը և կէս օրէն վերջը Մեծ Մաքսատան դիմաց ԱԼԵՔՍԱՆ գեղարանը, ուր իրեն դիմող ամեն հիւանդներն և մասնաւորապէս մանկանց և միզանցքի ամեն տեսակ հիւանդութեանց ենթա-կայ եղողները կը դարմանէ :

Հիմա արթի օրերը ճրի է :

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԿԱՐԱՍԵԱՑ

587, Մեծ Փողոց Բերայի, ի Թէքքէ, մզկիթին դիմաց, 587

Պ. Տիմիթրիոս Սթաթի, տէր վերոյգրեալ Մթերանոցին, պատիւ ունի ծանուցա-նել հասարակութեան և իւր բազմաթիւ յաճախորդաց թէ իւր վաճառատան մէջ կը գտնուին մեծ քանակութեամբ ամենագեղեցիկ և կատարելապէս հաստատուն կա-րասիւններ, ինչպէս Հայեւոր դարաններ, Ճաշարանի և սրահի սեղաններ, Ափս Կեանքի լապտերան-ներ (լապտեր), Զանգաւոր ձեռքով արտադրութեան, Հանգստաւոր լինանքներ, ևն, ևն :

Այս ամեն կարասիներն ի վաճառ հանուած են :

40 %

անհաւատարի դեղջով մը : Վաճառատունն նոյնպէս յոյժ աժան գներով ամեն տեսակ կարասիներ կը շինէ յանձնարարականաւ :

ԲԺԻՇԿ ՃԱՆԻԿ ՔՐԻՍԵԱՆ

ՊԵՇԻՔԹԱՇ, ՉԸՐԱՂԱՆ ՃԱՏՏԵՍԻ

ՓԱՇԱ ՄԱՀԱԼԼԷ

Թիւ 50

Թիւ 50

Իւր տունը ամեն օր, առաւօտ և երեկոյ հիւանդ կընդունի, իսկ կիւ-րակէ կէս օրէ վերջը ԶՐԻԱԲԱՐ :

Նոյնպէս իւր յաճախորդաց դիւրու-թեան համար, ըստ առաջնոյն կը շա-րունակէ գտնուիլ ամեն օր, Կ. Պոլիս կամուրջի դէմ Քիթի-Քիթի գեղարանը :

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

ՈՒՍՆՈՏՈՒԹԻՒՆ

ՄԿՆԱԶԳՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՂԱԶԳՈՒԹԻՒՆ ԲՈՂՈՐՈՎԻՆ կը բուժին իմ դրուածեամբս

Ստակը կ'ընդունուի փորձն յաջո-ղապէս կատարուելէ յետոյ :

Բժշկութիւն թղթակցութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉ ՏՐ. ԱԼՊԵՐ

Ֆրանսական Գիտական ընկերութեան պատուեալ առաջին կարգի ոս-կեայ շքադրամով, վասն ար-

ժանեաց :

46, Բլաս տիւ Թրոն, Փարիզ

Ի Տ Ա Ր Է Ի



Մ Ա Խ Ս Ո Ւ Ս Է

ՇՈԳԵՆԱԻՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐԸ

1884 Գեկտեմբեր 1 Շաբաթ օրէն սկսեալ

ԿԼԶԻՔ

ՕՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

Կղզ իներէն Կամուրջ

Ժ. Վ. 2 45 Մեծ Կղզի Հէյպէլի Պուրկաղ Գընալը
3 — Բէնտիք Գարթալ Մեծ Կղզի Հէյպէլի Պուր-
կաղ Գընալը

Կամուրջէն Կղզ իները

9 30 Գընալը Պուրկաղ Հէյպէլի Մեծ Կղզի Գարթալ
Բէնտիք
10 45 Գընալը Պուրկաղ Հէյպէլի Մեծ Կղզի

Օդը խիստ հարաւ փչած կամ սաստիկ ձիւն տե-
ղացած ատեն առաւօտուն առաջ ին շոգենաւը չը
բանելով՝ երկրորդ շոգենաւը մէկ անգամ պիտի բանի
և երեկոյին ալ կամուրջէն ժամ 10.30ին շոգենաւ մը
պիտի երթայ մինչև Մեծ Կղզի:

ԿԻԻՐԱԿԷ ՕՐԵՐԸ

Կղզ իներէն Կամուրջ

3 45 Բէնտիք Գարթալ Մեծ Կղզի Հէյպէլի Պուր-
կաղ Գընալը
8 — Բէնտիք Գարթալ Մեծ Կղզի Հէյպէլի Պուր-
կաղ Գընալը

Կամուրջէն Կղզ իները

4 45 Գընալը Պուրկաղ Հէյպէլի Մեծ Կղզի Գար-
թալ Բէնտիք
9 30 Գընալը Պուրկաղ Հէյպէլի Մեծ Կղզի Գար-
թալ Բէնտիք

Ծ. — Կը ծանուցուի, թէ օտար արծաթ դրամնց գործածութիւնը կայսերական կառավարութեան կող-
մանէ արգիլեալ լինելով՝ իտարէի—Մախուռուէի տոմարով շոգենաւը չպիտի առնուի կամ տուն զայն. և որովհետեւ
դրամ մանրելու պարտք չունին նոցա, ուստի ուղեւորք պարտին կանխաւ պատրաստել շոգենաւուն վարձքն,
որպէս զի ժամանակաւ չլինին:

Կամրջի և նաւահանգստի դործակալք տոմսերը պիտի հաւաքեն առնուն. խտիւ արգիլեալ է նոցա՝
տոմսի տեղ դրամ ընդունիլ. այս արգելքին հակառակ վարւողները ծանրապէս պատասխանատու են. ուս-
տի կը խնդրուի, որ կամրջէն ուղեւորք կամրջէն վրայ, և Գատրգիւղէն ուղեւորք՝ Գատրգիւղի նաւա-
հանգստին վրայ, իսկ ուրիշ նաւահանգիստներէ շոգենաւ մանողները՝ շոգենաւուց մէջ տոմս առնուն:

Երեկոյները կամրջէն ժամը 9.45ին, Մեծ Կղզեաց, և ժամը 11.30 և 12ին Գատրգիւղի համար ելնող
շոգենաւուց մէջ չպիտի ընդունուին լայնանիստ բեռներ, մեծ անտուկներ, երկոտասանեակ անոններ, և այլն
որ նեղութիւն կուտան ուղեւորաց:

Օդը միգապատ եղած ժամանակ, ամեն շոգենաւ վտանգէ գգուշանալու համար, պիտի դադար առնուի,
իւր գտնուած տեղը: Այսպէս ելմէ փոթորիկ պատճառաւ շոգենաւք չկատարեն իրենց որոշեալ ընթացքն,
ուղեւորք դանգատելու իրաւունք չպիտի ունենան:

ՀԱՅՏԱՐ—ԲԱՇԱ

ԻԶՄԻՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԿԱՌԱՌՈՒՄԵՐՈՒՆ
ՅԱՐՄԱՐԵԱԼ

ՕՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

Կամուրջէն

3 40 Իզմիտ դադող կառավարմը Ժ. 2
6 Առանց յարմարելու » 4
8 45 Իզմիտ դադող կառավարմը » 4
9 46 Մայթէրէ » » 4
11 45 Բէնտիք » » 6

Հայտար բաշան

4 40 Բէնտիքէն եկող կառավարմը Ժ. 1
7 10 Իզմիտէն » » 3
8 45 Առանց յարմարելու » » 5
11 20 Իզմիտէն եկող » » 5
11 55 Մայթէրէն եկող » » 5

ԳԱՏԸ—ԳԻԻՂ

ՕՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ		ԿԻԻՐԱԿԷ ԸՆԹԱՅՔ	
Կամուրջէն	Գատրգիւղէն	Կամուրջէն	Գատրգիւղէն
Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.
2 45	2 45	2 45	2 45
3 30	3 30	3 30	3 30
4 45	4 45	4 45	4 45
5 —	5 —	5 —	5 —
5 45	5 45	6 —	6 —
9 45	9 40	9 —	9 —
10 —	9 50	10 —	10 —
10 45	10 30	11 —	11 —
11 30	11 20	12 —	12 —
12 —	12 —		
— —	— —		

Գատրգիւղի շոգենաւք ի հարկին պիտի հանդի-
պին Հայտար բաշա:

Օդը խիստ հարաւ փչած կամ սաստիկ ձիւն տե-
ղացած ատեն երեկոյները կամուրջէն ժամ 12ին
մեկնող շոգենաւը քառորդ մ'առաջ ծանրայ պիտի
եկնէ: